



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Որպեսզի Չկրկնուի Հոկտեմբեր 27-ն

Հոկտեմբեր 27-ի օրը Հայաստանի դեկավարութիւնը՝ Վարչապետի գլխավորութեամբ այցելեց Ազգային ժողովի բակին մէջ գետեղուած՝ 1999 թուականի Հոկտեմբեր 27-ի ոճրագործութեան զոհերուն նուիրուած յուշարձանին:

Այդ թուականէն անցած է 24 տարի եւ տակաւին Հայաստան կը կրէ սպանդի հետեւանքները, որոնք հայութիւնը հասցուցին այսօրուայ վիճակին՝ մեծ հարուած հասցնելով Հայոց պետականութեան:

Այդ օրը Նայիրի Յունանեանի գլխավորած ահաբեկչական խումբը ներխուժելով Ազգային ժողովի դահլիճ, սպանեցին խորհրդարանի նախագահ Կարէն Տեմիրճեանին, վարչապետ Վազգէն Սարգսեանին եւ կառավարութեան անդամներէն շատերուն, որոնք բոլորը ներկայ էին այդ օրուայ նիստին՝ մասնակցելու համար խորհրդարանական վարչութիւնը հարց ու պատասխանի նիստին:

Թէեւ ահաբեկչական խումբի անդամները դատապարտուեցան երկարատեւ բանտարկութեան, սակայն օրուան իշխանութիւնները ամէն ճիգ թափեցին, որպէսզի չբացայայտուին գործողութեան բուն կազմակերպիչներն ու դրդողները: Յոյս կար որ, 2018-ի թաւշեայ յեղափոխութենէն ետք կարելի պիտի ըլլայ այդ հարցով տեղաշարժ արձանագրել, սակայն վերաբացուած դատական գործընթացը կ'ընթանայ խիստ դանդաղ:

Կարելի չէ չիշել մեր նորագոյն պատմութեան այս ողբերգական էջը ամէն անգամ երբ նախկին իշխանութեան ներկայացուցիչները ու անոնց ծառայող լրատուամիջոցները հարց կու տան ըսելով՝ «Որմէ՞ կը վախճայ Նիկոլ Փաշինեան»: Անոնք կը բողոքեն վարչապետի ապահովութեան համար առնուած միջոցներու մասին: Անդադար հարց կու տան թէ՞ ո՞նչ պէտք կայ վարչապետի տեղաշարժերու ընթացքին այդքան մեծ թիւով ոստիկանութեան եւ ապահովութեան ուժերու ներկայութեան: Կը բողոքեն որ, վարչապետի խորհրդարան այցելութեան ընթացքին յաւելեալ քննութենէ կ'անցնին լրագրողները: Նոյնպէս զարմանք կը յայտնեն վարչապետի ու բարձրաստիճան այլ պաշտօնեաներուն տրամադրուած գրահապատ մեքենաներու մասին:

Նիկոլ Փաշինեանի իշխանութեան գալէն ասդին անոր ապահո-

Հայաստան Նոր Գործընկերներ Կը Փնտռէ. Մոսկուան Զախողած Է Կատարել Դաշնակցային Պարտաւորութիւնները. Փաշինեան

Հայաստանը նոր գործընկերներ կը փնտռէ, քանի որ Մոսկուան ձախողած է իրագործել իր դաշնակցային պարտաւորութիւնները, յատկապէս Լեւոնային Ղարաբաղի նկատմամբ Ատրպէյճանի վերահսկողութեան հաստատման ժամանակ, «Wall Street Journal»-ին ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Այս իրադարձութիւնները մեզ յանգեցրին որոշման, որ կարիք ունենք զանազանեցնել մեր յարաբերութիւններն անվտանգութեան ոլորտում, եւ հիմա փորձում ենք դա անել», ըսած է Հայաստանի վարչապետը՝ աւելցնելով, որ նոյն այդ պատճառով ինք Հայաստանի մէջ ռուսական ռազմախարհիսի շարունակուող ներկայութեան մէջ որեւէ առաւելութիւն չի տեսներ:

Ամերիկեան պարբերականը կը փաստէ, որ «դժուարին դրութիւնը, որուն մէջ յայտնուած է Հայաստանը, երթալով աւելի կը մտահոգէ Միացեալ Նահանգներին ու արեւմտեան դաշնակիցները»:

«Եւրասիայով երկարող անկայունութիւններու երկար շարունակ մէջ այս տարածաշրջանը կը



Վարչապետ Փաշինեան «Wall Street Journal»-ի թղթակիցին հետ հարցազրոյցի ընթացքին

թուի պայթիւնավտանգ եւս մէկ կէտ», կը գրէ «WSJ»-ը, յաւելելով՝ «Ուաշինկթընի եւ եւրոպական մայրաքաղաքներուն մէջ առողջ մտահոգութիւնը այն է, որ Ատրպէյճանը՝ թրքական աջակցութեամբ եւ Ռուսաստանի մեղսակցութեամբ, մօտակայ ամիսներուն կրնայ փորձել գրաւել Հայաստանը կամ անոր մէկ

մասը՝ ցամաքային կամուրջ ստեղծելով Ատրպէյճանի եւ Թուրքիոյ միջեւ: Զուգահեռ, անյանգստացնող է, որ Ռուսաստանը կրնայ ծրագրել յեղաշրջում՝ Հայաստանի դեկավարը պաշտօնանկ ընելու համար»:

Եւրոպայի Խորհուրդը Լեռնային Ղարաբաղէն Տեղահանուած Անձերու Աջակցութեան Միջոցառումներու Փաթեթ Պիտի Պատրաստ

Գաղթի եւ փախստականներու հարցերով յատուկ ներկայացուցիչ Լէյլա Քայաճիքի Հոկտեմբեր 11-ի այցէն յետոյ Եւրոպայի Խորհուրդը կը նախապատրաստէ Հայաստանի փախստականներու ներհոսքին արձագանգելու միջոցառումներու համալիր փաթեթ:

Եւրոպայի Խորհուրդի պաշտօնական կայքին մէջ հրատարակուած յայտարարութեան համաձայն, փաթեթով կը նախատեսուի աջակցութիւն ցուցաբերել Հայաստանին՝ 100 հազար դարաբաղահայերու, այդ շարքին՝ մօտ 30 հազար երեխաներ հիւրընկալելու խնդիրները լուծելու համար:

Կը նշուի, որ այցի շրջանակներուն մէջ Քայաճիք համագործակցած է համապատասխան պետական մարմիններու, միջազգային գործընկերներու եւ հասարակական կազմակերպութիւններու հետ, այցելած է նաեւ Արտաշատի քաղաքապետարանի երկու ապաստարաններ, մատնանշած է աջակցութեան այն ոլորտները, որոնք ներառուած են Եւրոպայի Խորհուրդի՝ Հայաստանի համար 2023-2026 թրուականներու գործողութիւններու ծրագրին մէջ եւ Գաղթի ու ապաստարանի առումով խոցելի անձերու պաշտպանութեան 2021-2025 թրուականներու գործո-



ղութիւններու ծրագրին մէջ:

«Այս նուիրուած եւ նպատակաւոր դրուած փաթեթին միջոցով մենք պիտի աջակցինք մեր անդամ պետութեան՝ Հայաստանին եւ անոր ժողովուրդին, քանի որ անոնք կը բախին այս աննախադէպ դժուարութիւններուն եւ մարտահրաշխանութիւններուն», ըսած է գլխավոր քարտուղար Մարիա Փէյչինովիչ Պուրիչը:

Սեպտեմբեր 19-20-ին Լեւոնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի իրականացուցած ռազմական գործողութիւնէն յետոյ, վերջին տուեալներով, 100 հազար 652 արցախցի հեռացած է Հայաստան: Արցախի մը, ըստ գնահատականներուն, մէկ-երկու տասնեակ հայ մնացած է:

Այս Տարի Հայաստան Եկած Է 1,8 Միլիոն Ջրօսաշրջիկ. Իւրաքանչիւրը Հայաստանի Մէջ Կը Ծախսէ Շուրջ 1200 Տոլար

Այս տարի Հայաստան եկած է 1,8 միլիոն զբօսաշրջիկ, իւրաքանչիւրը Հայաստանի մէջ կը ծախսէ շուրջ 1200 տոլար: Ազգային ժողովին մէջ «ՀՀ 2024 թուականի պետական պիւտճէի մասին» օրէնքի նախագիծը քննարկելու առեւտրային մասին ըսաւ ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերոբեանը:

Ըստ անոր՝ ներքին զբօսաշրջութեամբ պայմանաւորուած, 1 զբօսաշրջիկէն Հայաստանի պիւտճէ կը մտնէ մօտ 44 հազար դրամ. «Այսինքն՝ մենք խօսում ենք այն մասին, որ ներգնայ զբօսաշրջութիւնից ՀՀ պիւտճէ մտնում է մօտ 100 միլիարդ դրամ»:

Քերոբեան նաեւ տեղեկացուց, որ զբօսաշրջութեան ոլորտին մէջ կառավարութեան ներդրումները վերջին 3 տարուան ընթացքին աճած են 6,5 անգամ՝ 2 միլիարդէն մինչեւ 12 միլիարդ:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Երբ Դու Երոպայով Չես Ջրաղուժ, Երոպան Է Քեզնով Ջրաղուժ

ՎԱՐՐԱՍ ԱԹԱՆՍԵԱՆ

Երոպայի խորհրդի նիստում ԵՄ առաջնորդները քննարկել են ուժեղացնելու պատերազմի, իսրայելա-պաղեստինեան հակամարտության եւ Հարավային Կովկասի անվտանգության հարցերը: Ամփոփիչ յայտարարության մէջ, ի մասնաւորի, նրանք Հայաստանի եւ Ատրպէյջանի առաջնորդներին կոչ են արել բարեխղճօրէն մասնակցել պրիւսեյեան ձեւաչափով բանակցութիւններին եւ գործընթացը մինչեւ տարեկան Հասցնել հանգրուանի: Խօսքն, ըստ երեւոյթի, ոչ թէ պայմանագրի, այլ շրջանակային փաստաթղթի շուրջ համաձայնութեան մասին է, քանի որ մինչ այդ յստակ սահմանուած է, որ կայուն եւ տեւական խաղաղութիւնը պէտք է հիմնուած լինի միմեանց ինքնիշխանութիւնը, սահմանների անփոփոխելիութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը ճանաչելու սկզբունքի վրայ:

Հայաստանը բանակցութիւնների պրիւսեյեան հարթակից չի հրաժարուել, Հոկտեմբերի վերջին նախատեսուած Փաշինեան-Ալիեւ հանդիպումը չի կայացել Ատրպէյջանի նախագահի «ժամանակի սղութեան» պատճառաբանութեամբ, եւ բարեխղճ գտնուելու յորդորն ակնյայտօրէն արուած է իհնամ Ալիեւին, որ չի մասնակցել նաեւ Գրանապոլի հանդիպմանը: Պաքոն սեփական ոչ կառուցողականութիւնը հիմնաւորելու համար ԱԳՆ մակարդակով կոշտ քննադատութիւն է հնչեցրել Ֆրանսայի հասցէին: Ատրպէյջանցի որոշ փոր-

ձագէտներ գտնում են, որ պրիւսեյեան հարթակում իհնամ Ալիեւը թուրքիայի նախագահի աջակցութեան կարիքն ունի, մինչդեռ Ֆրանսան ամէն անգամ արգելափակում է նրա մասնակցութիւնը: Որքանո՞վ է դա իրականութեանը մօտ՝ որեւէ այլ աղբիւրի տեղեկացուածութեամբ հաստատել կամ հերքել դժուար է:

Փոխարէնը Հոկտեմբերի սկզբից ASTNA տեղեկատու-վերլուծական կայքը երկու անգամ անդրադարձել է ԵՄ-Ատրպէյջանի հանդիպումի համագործակցութեան մասին համաձայնագրի «տեղապտոյտին»: Ըստ պայմանաւորութեան՝ Ատրպէյջանը 2027-ին ԵՄ երկրներ բնական գազի արտահանման տարեկան ծաւալը պէտք է հասցնի 20 միլիարդ խորանարդ մեթրի: Ատրպէյջանի բնական գազի պաշարները գնատահանում են 2, 4 տրիլիոն խորանարդ մեթրի սահմաններում, դա կազմում է համաշխարհային պաշարների մօտ 1, 4 տոկոսը: Բայց առկա հնարաւորութիւնները թույլ չեն տալիս մեծացնել արդիւնահանման ծաւալները եւ ենթակառուցուածքների, մասնաւորապէս՝ Պաքո-էրզրում խողովակաշարի, թողունակութիւնը: Անհրաժեշտ են միլիարդաւոր տոլարների ներդրումներ:

Ոչ պաշտօնապէս շրջանառուած քննարկումների հաւաստիութիւնը փորձագէտներին հասկանալի լեզուով բացատրել է Ատրպէյջանի SOCAR պետական նախագահային ընկերութեան փոխնախագահ Նասիրովը: Նրա խօսքերով՝

Եւրամիութեան տասնեակ երկրներ պատրաստակամ են ատրպէյջանական գազ գնել, բայց՝ իրենց տարածքում եւ միանգամայն բանական գներով: Ընդ որում, եւրոպական մասնաւոր ընկերութիւնները երկարաժամկէտ պայմանագրեր ստորագրելու շահագրգռուածութիւն չեն ցուցաբերում, ինչպէս նաեւ շրջանցում են ներդրումների թեման: Այլ կերպ ասած, եւրոպացիները մտադիր չեն գոնէ այս փուլում Ատրպէյջանի տնտեսութեան էներգետիկ հատուածում ներդրումներ անել: Նասիրովի գնահատմամբ՝ Ատրպէյջանը կարող է անհրաժեշտ գումարներ հաշվաթել, բայց դա չափազանց ռիսկային է, եթէ չկան մատակարարման եւ գնման երկարաժամկէտ պայմանագրեր:

Խնդիրն ունի նաեւ քաղաքական կողմ: Ատրպէյջանի բնական գազի պաշարների մի շատ զգալի մասը հետախուզուել է Կասպից ծովում ատրպէյջանա-թուրքմենական ծովային սահմանի վիճելի հատուածում: Մինչեւ անցեալ տարի այդ հանքավայրն ատրպէյջանական անուանակարգով կոչուում էր «Քյափազ» իսկ թուրքմենական «Սարգար»: Կողմերի միջեւ փոխադարձ համաձայնութեամբ այն վերանուանուել է «Դոստլուկ»/«Դոստլուկ» եւ պէտք է շահագործուի միասնաբար: Ըստ ծրագրուածի՝ հանքավայրից մինչեւ Պաքո-էրզրում գազատարի թերմինալ ընդլրեայ խողովակաշար պէտք է Ատրպէյջանը կառուցի: Դա էլ իր հերթին ոչ միայն լրացուցիչ ֆինանսական ծախսեր, այլեւ քաղա-

քական քննարկումներ է ենթադրում: Կասպից ծովի իրաւական կարգավիճակի մասին հնգակողմ համաձայնագրի իմաստով իւրաքանչիւր երկիր ունի ջրային աւազանի իր մասնաբաժինը, բայց բնապահպանական խնդիրներ առաջանալու դէպքում մէկի նախաձեռնութիւնը պէտք է արժանանայ միւս չորսի հաւանութեանը:

Այս եւ նման խնդիրներն, իհարկէ, կարգաւորում են, երբ քաղաքական համաձայնութիւն եւ այն ի կատար ածելու վճռականութիւն է ձեւաւորուում: Եւրոպայի խորհրդի, Եւրախորհրդարանի, ԵՆԽՎ-ի եւ Եւրոպայի ոչ կառավարական կառույցների նկատմամբ Ալիեւի վարչախմբի քամահրական վերաբերմունքը, պայմանաւորութեան թիւնները դրժելու կամ կատարումից հետեւողականօրէն խուսափելու վարքագիծը, երեւում է, Եւրամիութեանը հարկադրել են որոշակի ազդակներ չղել Պաքոնին: Դա ամենեւին էլ յարաբերութիւնների խզման նշան է: Բացառուած չէ, որ Ատրպէյջանը պատասխան ազդակ չղի՝ ակնարկելով, որ էներգետիկ արտահանման այլ ուղղութիւն կ'ընտրի: Իսրայէլ-պաղեստինեան հակամարտութիւնը գրեթէ չեղարկման է հասցրել թուրքիայի տարածքով իսրայէլական գազ Եւրամիութեան հարաւային երկրներ տարանցելու նախագիծը: Ուժեղացնել ուսական գազի իր տարածքով Եւրոպա արտահանումը, Պոլիկարիան «թուրքական

Շար.ը էջ 6

Շահրամանեանը Դեռեւս Չի Հասկացել, Որ Իր Ստորագրած Փաստաթուղթը Կապիտուլիացիայի Ամենավառ Օրինակն Է

ԴԱԻԹ ԼԵԻՈՆԵԱՆ

«Ռազմական գործողութիւնը սկսելուց չետոյ՝ ժամեր անց, ես հասկացել եմ, որ մենք մենակ ենք ատրպէյջանական այդ սկրեսիայի դէմ: Ռուսական կողմը, կարելի է ասել, գտնուում էր դիտորդի կարգավիճակում»: այս մասին հարցազրոյցի ժամանակ նշում է Սամուէլ Շահրամանեանը: Հետաքրքիրն այն է, որ մինչ ԼՂ-ի հայաթափումը, ՌԴ զօրախմբի անմիջական միջնորդութեամբ կամ անգործութեամբ պայմանաւորուած, հակառակորդին արդէն յանձնուել էին, Խժաբերդը, Լաչինի միջանցքը, Փառուխը եւ ԼՂ այլ բնակավայրեր, բայց միայն ատրպէյջանական վերջին յարձակման ժամանակ է Շահրամանեանը հասկացել, որ ՌԴ-ն իրենց ոչնչով չի օգնելու:

Շահրամանեանը չի կարողացել նաեւ ճիշտ ձեւով տնօրինել ԼՂ-ում գտնուող, տարբեր տուեալներով, աւելի քան 1 մլրդ. տոլարի ռազմական տեխնիկան ու ռազմամթերքը: Նա հարցազրոյցում շեշտում է, որ ՊԲ-ի ռազմական տեխնիկան յանձնուել է ռուսական կողմին՝ չետագայում ուտիլիզացնելու նպատակով: Ստացւում է, որ Շահրամանեանը հասկացել է, որ ռուսները իրենց մենակ են թողել ու խաբել են, բայց չի հասկացել, որ չի կարելի ռուսներին վստահել ու ռազմական տեխնիկա տալ նրանց առանց ուտիլիզացնելու: Յիշեցնենք, որ

ռուսները չեն ուտիլիզացրել ռազմական տեխնիկան, այլ համացանցում տարածուած որոշ տեսանիւթերի համաձայն՝ սարքին վիճակում յանձնել են Ատրպէյջանին:

Ըստ Շահրամանեանի՝ Սեպտեմբերի 19-ի առաւօտեան ինքն իմացել է սպասուող յարձակման մասին. «Ռուսները հաստատել են, որ ատրպէյջանցիները իրենց զգուշացրել են խաղաղապահներին դուրս բերել՝ հրետանին է աշխատելու»: Այդուհանդերձ, Շահրամանեանը օպերատիւ համապատասխան միջոցառումներ չի իրականացրել մարդկանց տարահանելու, ապաստարաններ տեղափոխելու համար եւ նոյնիսկ կրթական հաստատութիւններում դադարեցուած չեն եղել դասապրոցեսները: Աւելին, Արցախի տեղեկատուական շտաբը Սեպտեմբերի 19-ին յայտարարութիւն է տարածել, որ Ստեփանակերտի եւ հանրապետութեան շրջանների բոլոր կրթական հաստատութիւններում պարապմունքներն ընթանում են կանոնաւոր հունով՝ յորդորելով չտրուել խուճապային տրամադրութիւններին:

Շահրամանեանի խօսքով՝ ռազմական գործողութիւնները սկսելուց չետոյ ինքը ուղիղ կապ է հաստատել ատրպէյջանական

կողմի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ ռազմական գործողութիւնը կանգնեցնելու համար եւ առաջարկել է, որ ատրպէյջանցիները ուղարկեն ռազմական գործողութիւնները անյապաղ դադարեցնելու պահանջները, ու նրանց ուղարկած առաջին փաստաթուղթը իրենց կողմից չի ընդունուել: Հարցին, թէ ի՞նչ փաստաթուղթ էր դա, նա պատասխանել է. «Կարելի է ասել՝ կապիտուլիացիայի»: Կարծես թէ Շահրամանեանը դեռեւս չի հասկացել, որ իր ստորագրած փաստաթուղթը եւս կապիտուլիացիայի ամենավառ օրինակ է, յատկապէս, երբ փաստաթղթով ինքը համաձայնում էր բանակի կազմալուծմանը եւ մինչեւ Յունուարի 1-ը ԼՂ-ի լուծարմանը:

Հարցին, թէ արդեօք Հայաստանը տեղեալ էր, թէ Արցախն ինչ է ստորագրում, Շահրամանեանը դրական արձագանք է տուել, սակայն ՀՀ վարչապետը եւ բարձրաստիճան մի շարք պաշտօնեաներ բազմիցս նշել են, որ Հայաստանը տեղեակ չի եղել այդ փաստաթղթից եւ մասնաւորապէս նաեւ այն կէտից, որ ԼՂ-ից պէտք է դուրս բերուեն հայկական զօրամիւսորդները:

Շար.ը էջ 6

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱՎԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐԻՆՍԿԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Թե՛ Մարտ 1-ի, Թե՛ Յոկոտեմբեր 27-ի Պարագային Բոլորս Գիտենք, Չե՛, Ովքեր էին Կազմակերպիչները. Ալեն Սիմոնեան

«Շատ ժամանակ է անցել, եւ բնական է՝ ժամանակային բարդութիւններ կան: Բայց վստահ եմ, որ ներքուստ մենք գիտենք դրդիչներին եւ հիմնական պատճառները, ու թէ ովքեր են եղել: Պաշտօնի բերումով չեմ կարող ասել՝ որպէս մեղադրանք չհնչի: Բայց թէ՛ Մարտի 1-ի պարագայում, թէ՛ Յոկոտեմբերի 27-ի պարագայում, կարծում եմ, հիմնական դերակատարներին բոլորս գիտենք: Մնում է այդ փաստն արձանագրուի եւ համապատասխան պատիժ լինի», Ազգային ժողովի բաղկին մէջ, Հոկտեմբեր 27-ի ոճրագործութեան գոհեբու յիշատակին նուիրուած միջոցառման ընթացքին ըսաւ Աժ նախագահ Ալեն Սիմոնեան եւ չբացառեց, որ արտաքին դերակատարներ եւս կրնան եղած ըլլալ:



Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնեան

Սիմոնեան ըսաւ, որ քննութեան ծանօթ չէ, մանրամասնութիւններ չի գիտեր, կրնայ միայն քաղաքական գնահատականներ տալ: Քաղաքական կամք՝ գործը բացայայտելու համար, ըստ Սիմոնեանի՝ կայ:

«Թէ՛ «Մարտի 1»-ի պարագայում, թէ՛ «Հոկտեմբերի 27»-ի պարագայում, թէ՛ «Կոլցո» գործողութեան պարագայում, որը Բաղրամեան փողոցում կայացաւ, էդ բոլոր դէպքերում մենք բոլորս գիտենք, չէ՞, ովքեր էին կազմա-

կերպիչները: Մնում է միայն իրաւական ձեւակերպումներ լինեն», ըսաւ Ալեն Սիմոնեան:

«Նոր «Հոկտեմբեր 27»-ի վտանգ կը տեսնէ՞ք» հարցումին ի պատասխան, Սիմոնեան դրական պատասխան տուաւ. «Էն, ինչ տեղի ունեցաւ Հոկտեմբերի 27-ին, դրան նախորդող իրադարձութիւնները սրանից աւելի քիչ կարեւորութիւն ունեցող էին, շատ աւելի հեռու էր Մեղրին յանձնելու գաղափարը», ըսաւ Ազգային ժողովի նախագահը:

Սմբատեաններուն Առնչուող Գործով Պետութեան Վնասին Մէկ Մասը Հատուցուած է

Երեւանի Չայքովաքիի անուան երաժշտական դպրոցին յատկացուած տարածքը խարդախութեամբ յափշտակելու վերաբերեալ քրէական վարույթի շրջանակին մէջ հատուցուած է պետութեան պատճառուած վնասին մէկ մասը՝ 208 միլիոն դրամը, յայտնած են Գլխաւոր Դատախազութեան:



Ազատ արձակուած խմբավար՝ Սերկէյ Սմբատեան

Այս գործի շրջանակներուն մէջ կալանաւորուած էին Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբի գեղարուեստական դեկավար եւ գլխաւոր խմբավար Սերկէյ Սմբատեանը, անոր հայրը՝ նախկին դեսպան Արմէն Սմբատեանը: Նոյն գործով կ'անցնի մշակույթի նախկին նախարար Յասմիկ Պողոսեանը:

Դատախազութիւնը յայտնած է նաեւ, որ ութ մեղադրեալներէն երկուքին՝ Սերկէյ Սմբատեանի եւ Հ. Ա.-ի նկատմամբ քրէական հե-

Կեդրոնական Դրամատունը 2024-ի Համար Կը Կանխատեսէ 5,6 Տոկոս Տնտեսական Աճ

Հայաստանի Կեդրոնական Դրամատունը կը կանխատեսէ, որ 2024 թուականին տնտեսական աճը պիտի ըլլայ 5,6 տոկոս, իսկ գնաճը պիտի մօտենայ նպատակային թիրախին:

տնտեսական աճ ունենալուց յետոյ այս տարի կ'ունենանք, մեր գնահատականով, 7,2 տոկոս: Կարծում ենք, որ միւս տարի աճը որոշակիօրէն պէտք է նուազի՝ մօտենալով հաւանական աճի մակարդակին: Մեր գնահատականներով՝ այնուամենայնիւ, աճը հաւանականէն որոշակի բարձր կը լինի, քանի որ բաւականին մեծ ծախսեր են նախատեսուած: Բայց այս պահի դրութեամբ մեր կանխատեսումներով աճը 2024-ի համար լինելու է 5,6 տոկոս», ըսաւ Գալստեան:

Կեդրոնական Դրամատան նախագահ Մարտին Գալստեանը այս մասին ըսաւ Ազգային ժողովի մշտական յանձնաժողովներու համատեղ նիստին ընթացքին 2024 թուականի պետական պիւտձէի նախագիծի նախնական քննարկումներուն ժամանակ:

Գալստեան յայտնեց որ, այս պահին Հայաստանի մէջ կայ 0,1 տոկոս գնաճ:

«Մանկական Աշխարհ» Հանրախանութին Շէնքը Մասնաւորեցուցած է Արա Աբրահամեանին Պատկանող Ընկերութիւնը

Գլխաւոր Դատախազութեան Պետական շահերու պաշտպանութեան վարչութեան մէջ ուսումնասիրուած են Երեւան քաղաքի Արամի փողոցի 32 հասցէին գտնուող շէնքի՝ նախկին «Մանկական Աշխարհ» հանրախանութին՝ 6198 քմ մակերեսով հողամասի մասնաւորեցման վերաբերեալ փաստաթուղթերը, որուն մէջ յայտնաբերուած է առերեւոյթ յանցանքի դէպք՝ դատախազը յանցանքի մասին հաղորդում ներկայացուցած է Հակափտածութեան կոմիտէ:



Ռուսաստանահայ գործարար Արա Աբրահամեան

Երեւանի Կեդրոն համայնքին նուիրաբերուած, պատմամշակութային յուշարձան հանդիսացող «Մանկական Աշխարհ» նախկին հանրախանութին շէնքը 2001 թուականի Սեպտեմբեր 6-ին Կեդրոն թաղային համայնքի եւ «Սոզլասիէ-Արմենիայ» ընկերութեան միջեւ կնքուած ուղղակի վաճառքի պայմանագրով օտարուած է:

դեսպան է, ինչպէս նաեւ 2019-2021 թուականներուն եղած է արտաքին գործերու նախարարի տեղակալ: 2021-ին հեռացած է պաշտօնէն՝ սեփական դիմումի համաձայն:

2023 թուականի Հոկտեմբեր 10-ին Հակափտածութեան կոմիտէին մէջ նախաձեռնուած է քրէական վարույթ՝ Քրէական օրէնսգիրքի 441-րդ յօդուածի 1-ին մասով (պաշտօնատար անձի կողմէ իշխանական կամ ծառայողական լիազօրութիւնները կամ անոնցմով պայմանաւորուած ազդեցութիւնը չարաչահելը կամ լիազօրութիւնները անցնելը):

Ըստ իրաւաբանական անձերու երկտրոնային արձանագրութեան տուեալներուն՝ «Սոզլասիէ-Արմենիա»-ի միակ մասնակիցը «Սոզլասիէ» ընկերութիւնն է, որ արձանագրուած է Մոսկուայի մէջ ու կը պատկանի Արա Աբրահամեանին: «Սոզլասիէ-Արմենիա»-ի մէջ բաժնեմաս ունեցած է նաեւ Աբրահամեանի եղբայրը՝ Սերյոժա Աբրահամեանը, որ 2003-2007 թուականներուն եղած է անկուսակցական պատգամաւոր, իսկ 2007-ին պատգամաւոր դարձած է ՕԵԿ-էն:

«Սոզլասիէ-Արմենիա» ընկերութեան իրական սեփականատէր կը հանդիսանան Հրաչէայ Սարգսեանը, Վարդան Թունեանը եւ Աւետ Ադոնցը: Վարդան Թունեանը ոստիկանութեան ներքին հաշուեքննութեան վարչութեան նախկին պետն է: Ան այժմ ոստիկանութեան նախկին պետ Վլատիմիր Գասպարեանի եւ վերջինիս տեղակալ Լեւոն Երանոսեանի հետ միասին մեղադրեալի կարգավիճակ ունի մէկ այլ քրէական գործով: Աւետ Ադոնցը նախկին

Ի դէպ, «Սոզլասիէ-Արմենիա»-ն պետական գրանցում ստացած է 2001 թուականի Օգոստոս 31-ին՝ Արամի 32 շէնքի մասնաւորեցումէն օրեր առաջ: Հանրախանութի՝ Երեւանի կեդրոնին մէջ գտնուող շէնքը այժմ դատարկ է, այնտեղ որեւէ գործունէութիւն չի իրականացուիր:

2023-ի 9 Ամսուան Մէջ Առաջին 1000 Մեծ Հարկատուները Պետական Պիւտձէ Վճարած Են Սօս 3,17 Միլիարտ Տոլար

Առաջին 1000 մեծ հարկ վճարողներուն կողմէ 2023 թուականի Յունուար-Սեպտեմբեր ամիսներու ընթացքին պետական պիւտձէ ընդհանուր առմամբ վճարուած է աւելի քան 1 թրիլիոն 266 միլիարտ 911 միլիոն դրամ կամ մօտ 3 միլիարտ 174 միլիոն տոլար:

մաքային մարմին կատարուած վճարումներուն գումարը՝ շուրջ 299 միլիարտ 235 միլիոն դրամ:

Այս Տարուան Առաջին 9 Ամիսներուն ՀՀ Քաղաքացիութիւնը Տրուած է 16 Հազար 21 Անձի

Այս տարուան առաջին 9 ամիսներու ընթացքին նախագահին հրամանագրով ՀՀ քաղաքացիութիւնը շնորհուած է 16 հազար 21 անձի, քաղաքացիութեան հրամարտ է 2 հազար 726-ը: Ազգային ժողովին մէջ այս մասին յայտնեց Ներքին Գործերու նախարարութեան գլխաւոր քարտուղար Արա Ֆիտանեանը:

ՊԵԿ-ը հրապարակած է տուեալ ժամանակահատուածին 1000 մեծ հարկ վճարողներուն ցանկը, որուն առաջին եռեակին մէջ են Ջանգեղուրի պղնձամոլիպտենային գործարանը, «Կապիբոմ Արմենիա» եւ «Կրանտ Թոպաք» ընկերութիւնները՝ համապատասխանաբար 52,4 միլիարտ, 39,5 միլիարտ եւ 31 միլիարտ դրամ ընդհանուր վճարումներով:

9 ամիսներուն յանցագործութիւններու թիւը 26 հազար 489 էր, ապա այս տարուան նոյն ժամանակահատուածին 29 հազար 682 է: Յանցագործութիւններու աճը պայմանաւորուած է թմրանիւթերու ապօրինի շրջանառութեան, ապօրինի գէնքի եւ կաշառակերութեան դէպքերու բացայայտմամբ: Արա Ֆիտանեան խորհրդարանին տեղեկացուց, որ թմրանիւթերու ապօրինի շրջանառութեան դէպքերը աճած են 2294-ով, կաշառակերութեան դէպքերը՝ 295-ով:

ԼՈՒՐԵՐ

Փաշինեան Թիֆլիսի Մէջ Ներկայացուց «Խաղաղութեան Խաչմերուկ» Նախագիծը



Վարչապետ Նիկոլ Փաշինեան ելոյթ կ'ունենայ «Մետաքսի ճանապարհ» համաժողովի ընթացքին

«Մետաքսի ճանապարհ» պատմական եզրույթը կ'առնչուի բարեկեցութեան, խաղաղութեան, զարգացման, համագործակցութեան հետ, որովհետեւ Մետաքսի ճանապարհը կ'անցնէր բազմաթիւ երկիրներով ու բնակավայրերով, եւ այդ ճանապարհները մարդկային, մշակութային, տնտեսական ու քաղաքական կապեր ստեղծելու, ժողովուրդներու, երկիրներու իրար աւելի լաւ ճանչնալու միջոց էին: Այս մասին յայտարարած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ Թիֆլիսի մէջ ելոյթ ունենալով «Մետաքսի ճանապարհ» համաժողովի ընթացքին:

Ճանապարհը ոչ միայն երկիրներ ու քաղաքներ կը կապէ միմեանց, այլեւ մարդոց, եւ հետեւաբար, եթէ բանուկ, գործուն ճանապարհը համագործակցութեան, խաղաղութեան, յաջողութեան նշան է, փակ ճանապարհները կը վկայեն խնդիրներու մասին, ընդգծած է Փաշինեան՝ շարունակելով. «Մենք սա գիտենք սեփական օրինակով: Մեր չորս հարեւաններից երկուսի հետ մեր ճանապարհները բաց են, ինչը վկայում է նրանց հետ մեր ունեցած յարաբերութիւնների բարեկամական լինելու մասին: Մեր հարեւաններից երկուսի հետ մեր ճանապարհները փակ են, ինչը յարաբերութիւններում առկայ բարդութիւնների շատ խօսուած վկայութիւն է: Բայց ես այսօր չեմ եկել պատմելու մեր ունեցած բարդ յարաբերութիւնների մասին, այլ ուզում եմ ասել, որ առանց ճանապարհների շատ դժուար կը լինի կառուցել խաղաղութիւն»:

«Խաղաղութեան Խաչմերուկ» նախագիծը՝ խաղաղութեան օրակարգի կարեւոր մասն է, որ Հարաւային Ասիայի շուկայում ունի խաղաղութեան կարիք, ըսած է Հայաստանի վարչապետը. «Իսկ ի՞նչ է խաղաղութեան»:

«Ձանգեզուրի Միջանցքը» Մեզի Համար Կորսնցուցած Է Իր Գրաւչութիւնը. Հաճիւ

Ատրպեյճանը մտադիր չէ գրաւել Միւրիքը այն բանէն յետոյ, երբ երկու կողմերը չկրցան համաձայնութեան գալ «Ձանգեզուրի միջանցք»-ի հարցով: Այս մասին «Politico»-ի հետ գրոյցին ըսած է Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի արտաքին քաղաքականութեան գլխաւոր օգնական Հիքմետ Հաճիւը:

Դա մի վիճակ է, երբ երկրներն ապրում են բաց սահմաններով, տնտեսական, քաղաքական, մշակութային, մարդկային աշխուժ կապերով կապուած, բոլոր հարցերը դիւանագիտական եղանակով եւ երկխօսութեամբ լուծելու փորձ եւ աւանդույթ կուտակած: Սա է իրական խաղաղութիւնը»:

«Այս է պատճառը, որ մեր կառավարութիւնը մշակել եւ ներկայացնում է «Խաղաղութեան Խաչմերուկ» նախագիծը՝ որպէս խաղաղութեան օրակարգի կարեւոր մի մաս: Այդ նախագիծի առանցքային իմաստը Հայաստանի, Թուրքիայի, Ատրպեյճանի, Իրանի Իսլամական Հանրապետութեան միջեւ հաղորդակցութիւնների զարգացումն է, ճանապարհների, երկաթուղիների, խողովակաշարեր, մալուխներ, էլեկտրահաղորդման գծեր նորոգելու, կառուցելու, գործարկելու միջոցով», ըսած է Փաշինեան՝ շարունակելով:

«Հայաստանի հարաւով եւ հիւսիսով անցնող երկաթուղիներն արդէն երեսուն տարի չեն գործում տարածաշրջանային առումով, չեն գործում նաեւ արեւելքը արեւմուտքին կապող բազմաթիւ ճանապարհներ, մինչդեռ այդ ճանապարհների վերագործարկումը կասպից ծովը Միջերկրականին կապող կարճ եւ արդիւնաւէտ ուղի կը դառնար, թէ՛ երկաթուղային, թէ՛ որպէս մայրուղի»:

«Նոյն կերպ եւ այդ երկաթուղային եւ մայրուղիի հաղորդակցութիւնները կարող են Մոսկուայի, այդ թւում՝ վրացական նախնադիտութեան կապող արդիւնաւէտ ճանապարհ դառնալ: Այս ծրագիրը հսկայական օգուտներ կը բերի մեր տարածաշրջանի բոլոր երկրներին եւ ես ցանկանում եմ կառավարութիւնների, մասնաւոր ներդրողների ուշադրութիւնը հրաւիրել այս հնարաւորութեան վրայ»:

Նախագիծը, անոր խօսքով, «կորսնցուցած է իր գրաւչութիւնը, փոխարէնը Ատրպեյճանը կրնայ այդ ընել Իրանի հետ»:

«Մեր օրակարգը կը վերաբերէր միայն երկկողմանի ներգրաւուածութեան շրջանակներուն մէջ փոխադրութեան կապերու կառուցմանը: Այն դեռ սեղանին է», ըսած է ան:

Հայաստանի 2024-ին Պաշտպանութեան Ոլորտի Պիւտճէն 2018-ի Համեմատ Կ'աճի 125 Տոկոսով

Պաշտպանութեան ոլորտին մէջ 2018 թուականին համեմատ 2024-ին պիւտճէն կը կրկնապատուի՝ աւելնալով 125 տոկոսով: Աւելցող մասը 2024 թուականի պիւտճէին 309 միլիարդ դրամ է, իսկ 2018 թուականին նախատեսուած ամբողջ տարուան պիւտճէն եղած է 247,9 միլիարդ դրամ:

Այս մասին Ազգային ժողովին մէջ 2024 թուականի պետական պիւտճէի քննարկման ժամանակ նշեց վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Պէտք է արձանագրենք, որ մեր պաշտպանական ծախսերը հակասօրէն եւ առանցքային են, եւ մեզ համար առաջնային է մեր բանակի բարեփոխումները: Պէտք է

ընդգծել, որ պաշտպանական ծախսերի այսպիսի դինամիկան որեւէ կերպ չի հակասում խաղաղութեան մեր օրակարգին, որովհետեւ մարտունակ զինուած ուժեր ունենալը իւրաքանչիւր պետութեան օրինական իրաւունքն է ու պարտադիր համարում՝ ցանկացած պետութեան համար: Մենք այս ուղղութեամբ առաջ ենք շարժուում, ի հարկէ, ոչ այն տեմով, որը մեզ համար ցանկալի է, որովհետեւ դրա համար կան առարկայական եւ ոչ-առարկայական խոչընդոտներ, բայց պէտք է արձանագրենք, որ մենք մեր հռչակած ընթացքը անփոփոխութեան ոլորտում մեր յարաբերութիւնների վերաբերեալ իրազօր-ծում ենք», ըսաւ ան:

Հնդկաստան Կը Քննարկէ Հայաստանին Սպառազինութեան Նոր Խմբաքանակ Մատակարարելու Հարցը



Նախապէս Հայաստանին մատակարարուած հնդկական «Pinaka» հրթիռային կայանքը

Հնդկաստանը կը դիտարկէ Հայաստանին սպառազինութեան նոր խմբաքանակ մատակարարելու հնարաւորութիւնը: Այս մասին գրած է «The Economic Times» պարբերականը:

«Հնդկաստանը կը մտածէ Հարաւային Կովկասի մէջ իր ռազմավարական դաշնակիցին՝ Հայաստանին սպառազինութեան նոր խմբաքանակ մատակարարելու մասին՝ անցեալ տարուան ընթացքին սպառազինութեան առաջին խմբաքանակի յաջող մատակարարումէն յետոյ», գրած է պարբերականը:

Կը նշուի, որ վերջերս Հայաստանէն բարձրաստիճան պաշտօնեայ ժամանած է Նիւ ԵլՏի եւ քննարկումներ ունեցած է այս առնչութեամբ: Պարբերականը կ'ընդգծէ, որ

Հնդկաստանը դարձած է գէնքի վստահելի մատակարար Հայաստանի համար:

Նոր մատակարարումներու մասին մանրամասնութիւններ առայժմ չկան, սակայն, ինչպէս կը նշէ պարբերականը, հայ դիտորդները, որոնք փափաքած են անանուն մնալ, ըսած են, որ խմբաքանակը կրնայ ներառել սարքաւորումներ, որոնք զսպող միջոց պիտի հանդիսանան Ատրպեյճանի հետ հակամարտութեան իրավիճակին մէջ:

Հնդկաստանի կողմէ Հայաստանին մատակարարուած սպառազինութեան վերջին խմբաքանակը ներառած է «Pinaka» տեսակի բազմափողային հրթիռային կայաններ, հակահետախուզային միջոցներ, հրթիռներ եւ այլ զինամթերք:

Հայաստանը Մինչեւ 2044 Չի Կրնար Հրաժարիլ Ռուսական Ռազմախարսիսէն. «Իզվեսթիա»

Հայաստանը չի կրնար միակողմանիօրէն հրաժարիլ ռուսական ռազմախարսիսէն մինչեւ 2044 թուականը: Կիւմրիի թիւ 102 խարխիսին վերաբերեալ պայմանագրի գործողութեան ժամկետը որոշուած է թիւ 5 արձանագրութեամբ, այդ դրոյթներու վերանայման կարգը կը հանդիսանայ բուն համաձայնագրի մաս, եւ բոլոր որոշումները կ'ընդունուին փոխադարձ համաձայնութեամբ, պարզաբանած է ռուսական «Իզ-

վեսթիա»-ն:

Այս տեղեկութիւնը հաստատած են Պետական Տնօնային մէջ: Աւելի վաղ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնած էր, որ Երեւանը չի տեսներ առաւելութիւններ իր տարածքին ռուսական ռազմախարսիսի առկայութեան: Միաժամանակ խարխիսի հնարաւոր դուրսբերման մասին հարցումին Փաշինեան պատասխանած էր, որ ներկայիս նման հարց չի քննարկուի:

Լեոնային Ղարաբաղի Սեջ ՄԱԿ-ը Պեոք Է Գործե Արհեստավարժ Եւ Անաչառ. Լեմքինի Հիմնարկ



Լեմքինի անուան ցեղասպանության կանխարգելման հիմնարկը հիասթափություն չստանալով է Հոկտեմբեր 1-ին ՄԱԿ-ի առաքելության Լեոնային Ղարաբաղ կատարած այցի արդյունքներին, որ տեղի ունեցած է այն բանին յետոյ, երբ ԼՂ-ի ամբողջ հայ բնակչությանը արդեն փախած էր ատրպէյ-ճանական կողմի վերջին ներխուժումին յետոյ բռնի տեղահանման պատճառով:

«Մենք ՄԱԿ-ին կոչ կ'ընենք նախապատրաստելու համապատասխան առաքելության դէպի Արցախի Հանրապետություն, որ պիտի ներառէ միջազգային խումբի անդամներ հակամարտության հանդէպ չհզոք երկիրներէ՝ այնտեղ ընթացիկ իրավիճակի մանրակրկիտ վերլուծություն իրականացնելու համար: Արցախի մէջ հայերուն իրաւունքները ապահովելու համար ՄԱԿ-ը պէտք է գործէ արհեստավարժ եւ անաչառ՝ պահպանելով հաւատարմութիւնը ՄԱԿ-ի կանոնադրութեան մէջ ներկայացուած արժէքներուն», կ'ըսուի հիմնարկի յայտարարութեան մէջ: Փաստաթուղթին մէջ մասնաւորապէս կը նշուի, որ Լեմքինի հիմնարկը ՄԱԿ-ի առաքելութեան աշխատանքը կը համարէ անյաշող, քանի որ չէ կրցած ճշգրիտ ներկայացնել եւ

գնահատել ԼՂ-ի մէջ տիրող իրավիճակը:

«Մենք խորապէս համոզուած ենք, որ «Առաքելութիւնները յանուն առաքելութեան» եւ «Յայտարարութիւնը յանուն յայտարարութեան» համարժէք պատասխան չեն այնպիսի լուրջ եւ վտանգաւոր իրավիճակներուն, որ քան այն, ինչ տեղի ունեցած է Հարաւային Կովկասի մէջ: Մենք կասկածի տակ կը դնենք այդ առաքելութեան բարեխղճութիւնն ու ազնուութիւնը: ՄԱԿ-ի առաքելութեան գործունէութեան եւ գնահատման անորոշ սկզբունքները, ուր կը բացակային որեւէ յստակ նպատակները, մեթոտաբանութիւնը կամ ցուցումները, լրջօրէն կը վտանգէ իսթարբութիւնը վստահութիւնը, որ միջազգային հանրութիւնը միասին կը տածէ ՄԱԿ-ի աշխատանքին նկատմամբ», յայտարարած են կառույցէն:

Աւելի վաղ, ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարի ներկայացուցիչ Սթեֆան Ծյուժարիքը նշած էր, որ ԼՂ այցելութեան մէկ օրուան ընթացքին ՄԱԿ-ի առաքելութիւնը քաղաքացիական ենթակառուցուածքներու, այդ շարքին՝ դպրոցներու, հիւանդանոցներու ոչնչացման նշաններ չէ յայտնաբերած, թէեւ բոլոր խանութները փակ եղած են:

Բռնի Տեղահանման Ընթացքին 64 Արցախցի Մահացած Է

64 արցախցի մահացած է բռնի տեղահանման ընթացքին՝ ճանապարհին սնունդի, դեղորայքի, բժշկական օգնութեան բացակայութեան պայմաններուն մէջ, «Ազատութեան» փոխանցեց Քննչական Կոմիտէի խօսնակ Գոռ Աբրահամեանը:

Ան նաեւ տեղեկացուց, որ Սեպտեմբեր 19-ի մարտական գործողութիւններէն յետոյ մինչեւ այժմ 30 գինուորի եւ 12 քաղաքացիական անձի գտնուելու վայրը անյայտ է:

Ըստ Աբրահամեանի՝ մէկօրեայ պատերազմի գոհերուն թիւը աւելի քան 200 է, սպանուած է 9

քաղաքացիական անձ, անոնցմէ 3-ը երեխաներ են, վիրաւորուած ստացած են 231 զինուոր ու 80 խաղաղ բնակիչ:

Քննչական Կոմիտէին կը տեղեկացնեն, որ ատրպէյճանցի զինուորականները 14 հոգի խոշտանգած են:

Այս տուեալները, ըստ Աբրահամեանի, վերջնական չեն, Ատրպէյճանի կողմէ Լեոնային Ղարաբաղի մէջ իրականացուած ցեղային գտնումներուն վերաբերեալ քրէական գործով քննութիւնը կը շարունակուի:

Խնդրեցի Պարոն Սիրգոյեանէն Թոյլ Տալ Երեւանի Սեջ Հիմնել Հունգարական Հիւպատոսութիւն

Հունգարիոյ արտաքին գործերու եւ առեւտրի նախարար Փեթեր Սիյարթօն ժամանած է Հայաստան:

Տեղի ունեցած է Հայաստանի եւ Հունգարիոյ արտաքին գործերու նախարարներու առանձնազրոյցը, որուն յաջորդած է ընդ-

լայնուած կազմով հանդիպումը: Հանդիպման աւարտէն յետոյ կայացած է Սիրգոյեանի եւ Սիյարթօնի մամուլի ասուլիսը:

«Անցեալ տարուան աւարտին մենք պարոն նախարարին հետ Լեհաստանի մէջ որոշում ընդունեցինք առ այն, որ կը վերսկսենք մեր

Պետական Պարտքը Կ'աւելնայ, Որովհետեւ Պիտուէն Պակասուրդ Ունի

«Պետական պարտքն աւելանում է, որովհետեւ մեր պիւտճէն ունի պակասուրդ: Այսինքն՝ մեր ծախսերն աւելի շատ են, քան մեր եկամուտները: Ամէն տարի ունենում ենք մօտաւորապէս 3 տոկոսին մօտ ծրագրաւորուած պակասուրդ: Հիմա 2024 թուականի համար մենք ունենք 3 թրիլիոն 17 միլիառի ծախս: Բայց դրանից ունենք 340 միլիարդ ավելի քիչ եկամուտ: Եւ 340 միլիարդ պարտք պէտք է վերցնենք», Ազգային ժողովին մէջ ճեպագրուցի ժամանակ ըսաւ ՀՀ Ելեւմուտքի նախարար Վահէ Յովհաննիսեանը:

Ան նշեց, որ տարբեր գործընկերներ կ'ըսեն, որ այդ գումարը դարձեալ աւելցուցէք, եւ չի շեցուց, որ Ազգային ժողովի փոխնախագահ Յակոբ Արշակեանը կ'առաջարկէր բարձր արհեստագիտական ոլորտին աւելի շատ գումար յատկացնել:

Նախարարին խօսքով՝ եթէ որոշեն այդ ծախսը ընել, սա կը նշանակէ, որ այդ պակասուրդը աւելի շատ պէտք է ըլլայ, եւ հիմա այդ պակասուրդը կը կատարուի պարտքով:

«Մենք տարբեր աղբիւրներից պարտք ենք ներգրաւում, որպէսզի այս ծախսերը կարողանանք ապահովել: Եւ միշտ պարտքն աճում



ՀՀ Ելեւմուտքի նախարար Վահէ Յովհաննիսեան

է: Այլ հարց է, որ մեր եկամուտները պէտք է աւելի արագ աճեն, քան մեր պարտքը, որպէսզի մենք երբեք խնդիր չունենանք: Դուրս որ 100.000 վարկ էք վերցնում, դա շատ է, թէ՞ քիչ է: Դա կախուած է նրանից, թէ դուրս ինչ աշխատավարձ էք ստանում», ըսաւ նախարարը:

Ան նշեց, որ մեր պարտք-ՀՆԱ յարաբերակցութիւնը միւս տարուան վերջը կը ծրագրեն, որ ըլլայ 50 տոկոսէն ցած, մասնաւորապէս՝ 48,4 տոկոս:

Գանատան Կանգնած Է Հայաստանի Կողքին. Գանատայի Արտաքին Գործերու Նախարար

«Շատ հաճելի է կրկին Հայաստան գտնուել, պարոն Սիրգոյեան, թէպէտ ըսիք, որ սա արտաքին գործերու նախարարի՝ Հայաստան առաջին պաշտօնական այցն է, բայց իմ երկրորդ այցն է, որովհետեւ այն ժամանակ արտաքին գործերու նախարար չէի: Ֆրանքֆոնի համար պատասխանատու նախարարն էի եւ մեծ ուրախութեամբ կը չի շեմ այն հրաշալի զագաթաժողովը, որ հիւրընկալուեցաւ Հայաստանի կողմէ 2018 թուականին: Այլ ժամանակներ էին, չիրաւի: Բայց հրաշալի է, որ վերադարձած եմ», այս մասին ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Սիրգոյեանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ ըսաւ Գանատայի արտաքին գործերու նախարար Մելանի ժոլին:

Ան նշեց, որ Գանատայի եւ Հայաստանի բարեկամութիւնը հիմնուած է երկու ժողովուրդներու միջեւ խոր կապերու վրայ: Նախարարը անկեղծացաւ՝ ըսելով, որ երբ ինք կը վերադառնայ այստեղ, իրեն կը թուի, թէ իր ընտանիքին գիրկը վերադարձած է:

Այնուհետեւ Գանատայի արտաքին գործերու նախարարը ըսաւ, որ հայկական ծագում ունեցող 60.000 անձ Գանատան հայրենիք կը



Գանատայի արտաքին գործերու նախարար Մելանի ժոլին

համարեն, եւ Գանատայի հայկական համայնքը աշխույժ է, այն շատ գործուն է եւ հսկան ներդրում ունի իրենց երկրի քաղաքներու կեանքին մէջ, ընդ որում իր հայրենի քաղաքի՝ Մոնրէպլի:

«Գանատան կանգնած է Հայաստանի կողքին՝ աշակցելով հայ ժողովուրդի անկախութեան ու ինքնիշխանութեան, մենք կը հաւատանք ձեր ժողովրդավարական նկրտումներուն եւ պատրաստ ենք աշխատելու ձեզի հետ», ըսաւ նախարարը:

զիւսանագիտական կապերը եւ կը կառուցենք այնպիսի համագործակցութիւն, որ պիտի ծառայէ երկու երկիրներու շահերուն», ըսաւ Հունգարիոյ արտաքին գործերու նախարարը եւ աւելցուց, որ կայ ընդհանուր հիմք՝ քրիստոնէութիւնը: Երկու երկիրներն ալ հարիւրամեակներ քրիստոնէական են:

«Խնդրեցի պարոն նախարարին, որ ան ինձի թոյլ տայ Երեւանի մէջ ստեղծել հունգարական

հիւպատոսութիւն, եւ մենք պիտի խնդրենք «WizzAir» հունգարական ընկերութեանէն, որ արդէն իսկ 7 երկիրներու 9 քաղաքներ կը թռչի, աւելցնել նաեւ Պուտափեշթը այս երկիրներու շարքին՝ ֆիզիքապէս, անմիջական կապ ապահովելով մեր երկիրներուն միջեւ», ըսաւ ան: Փետր Սիյարթօն սա բաւական լաւ լուծում համարեց երկու երկիրներուն յարաբերութիւնները ամրապնդելու հարցին մէջ:

Տունիա Միյաթովիչ Կ'ամփոփե Զայաստան Եւ Ատրպէյճան Այցերը

«Մարդու իրաւունքներու խախտումները դարձեալ նշանաւորեցին Ղարաբաղի տարածաշրջանին մէջ եւ անոր շուրջ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ երկարատեւ հակամարտութեան վերջին գլուխը», Հայաստան եւ Ատրպէյճան այցերը ամփոփելով յայտարարած է Եւրոխորհուրդի մարդու իրաւունքներու յանձնակատար Տունիա Միյաթովիչը:



Ղարաբաղի հայերը «յայտնուեցան լքուած վիճակի մէջ՝ առանց որեւէ կողմէ որեւէ յուսալի անվտանգութեան կամ պաշտպանութեան երաշխիքներու», «անոնց համար տունն է հեռանալը միակ հասանելի տարբերակն էր»:

«Մարդու իրաւունքներուն նկատմամբ լիակատար յարգանքը եւ միջազգային չափանիշներուն խստորէն հետեւիլը պէտք է այժմ դրուին երկու երկիրներու միջեւ հաշտեցման եւ կայուն խաղաղութեան ճանապարհի կեդրոնին», ընդգծած է յանձնակատարը:

Միյաթովիչ երկու երկիրներ այցելած է Հոկտեմբեր 16-23-ին, հանդիպած է ղեկավար պաշտօնեաներու, մարդու իրաւունքներու պաշտպաններու, հակամարտութենէն տուժածներու, միջազգային եւ իրաւապաշտպան կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ, եղած է նաեւ հայաստանի Լեռնային Ղարաբաղի մէջ: «Այցին պատճառը Սեպտեմբերի վերջը ընդամենը քանի մը օրուան մէջ Հայաստան փախած աւելի քան 100 հազար 600 դարաբաղցի հայերու զանգուածային տեղահանումն էր: Այդ յաջորդեց Սեպտեմբեր 19-ին եւ 20-ին Ատրպէյճանի ռազմական գործողութիւններուն, տարածաշրջանի հետագայ լիակատար վերահսկողութեան եւ Ատրպէյճանի կողմէ Լաչինի միջանցքով ճանապարհի իննամսեայ արգելափակման հետեւանքով մարդոց տեղաշարժի ու հիմնական ապրանքներու, ծառայութիւններու եւ ուժանիւթակիրներու հասանելիութեան երկարատեւ խախտումներու», նշած է Միյաթովիչ՝ յաւելելով, որ

«Ատրպէյճանը պէտք է երաշխաւորէ տարածաշրջանին մէջ մնացած հայերու եւ Հայաստան մեկնածներու մարդու իրաւունքները, ներառեալ՝ ապահով եւ արժանապատիւ իրենց տունները վերադառնալու իրաւունքը», ընդգծած է յանձնակատարը:

ԵՆ մարդու իրաւունքներու յանձնակատարի գրասենեակին տարածած հաղորդագրութեան համաձայն՝ Միյաթովիչ շեշտած է, որ «այժմ աւելի քան երբեք բոլոր կողմերը պէտք է վճռական գործողութիւններ ձեռնարկեն՝ կանխելու եւ պայքարելու ատելութեան խօսքի դէմ, ինչպէս նաեւ աջակցին համակցութեան եւ հաշտեցման նպատակով նախաձեռնութիւններուն»:

Յանձնակատարը իր դիտարկումներն ու առաջարկութիւնները պիտի ներկայացնէ յառաջիկային:

Հայաստան Նոր Գործընկերներ Կը Փնտռէ

Շարունակուած էջ 2-էն

Ամերիկեան պարբերականը կը չի շեղուի, որ վերջին շաբաթներուն Մոսկուան անցած է հրապարակային կշտամբանքներու եւ սպառնալիքներու այն բանէն ետք, երբ Հայաստանը վաւերացուց Հոռոմի կանոնադրութիւնը, վարչապետն ալ Եւրոխորհուրդարանին մէջ քննադատեց Ռուսաստանի անգործութիւնը Հայաստանի ու արցախահայերուն անվտանգութիւնը պաշտպանելու հարցով:

Արձագանգելով հարցումին, թէ արդեօք իրեն կը մտահոգե՞ն նման յայտարարութիւնները եւ մտափախութիւն չունի՞ր, որ Մոսկուան կրնայ գինք հեռացնել իշխանութենէն, Փաշինեան վրդովմունքը չէ թաքցուցած:

«Նման մօտեցումը խախտում է բազմաթիւ կանոններ՝ միմեանց ներքին գործերին չմիջամտելուց եւ դիւանագիտական կողակտութիւնից սկսած», ըսած է ան:

Չնայած յայտարարուեցաւ, որ Ատրպէյճանը հրաժարած է ամսուան վերջը Պրիւքսէլի մէջ նախատեսուող հանդիպումէն, Հայաստանի վարչապետը պնդած է, որ կը մնայ լաւատես՝ յառաջիկայ ամիսներուն Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագիր կնքելու հարցով:

«Տարածաշրջանի ապագան

պէտք է լինի տեւական ժամանակ փակ սահմանների ու առեւտրային ուղիների, այդ թւում՝ Թուրքիան ու Ատրպէյճանը կապող ճանապարհի բացումը, եթէ այն յարգում է Հայաստանի ինքնիշխանութիւնը: Անվտանգութիւնը պէտք է ձեռք բերուի ոչ միայն բանակով, այլեւ տարածաշրջանային խաղաղութեամբ», ըսած է ան:

Պատասխանելով Ռուսաստանի հետ Հայաստանի պատմական յարաբերութիւններուն վերաբերեալ հարցումին՝ Փաշինեան յորդորած է անոր փոխարէն կեդրոնանալ «Թուրքական հարեւաններու» Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ Հայաստանի շատ աւելի երկար պատմութեան վրայ»:

«Այստեղ են բոլոր հարցերը, եւ այստեղ են բոլոր հարցերի պատասխանները», ըսած է Փաշինեան, յաւելելով. «Մենք պէտք է նախ աշխատենք բարելաւել տարածաշրջանային մեր յարաբերութիւնները»:

Աւելին, Փաշինեան ընդգծած է, որ անվտանգութեան ոլորտին մէջ յարաբերութիւնները զանազանեցնելու, նոր դաշնակիցներ գտնելու Երեւանի ջանքերը պէտք է դիտարկել ոչ թէ զուտ որպէս արեւմտեան խարխիսներու եւ գէնքի խնդրանք, այլ՝ որպէս տարածաշրջանին մէջ կայուն խաղաղութեան ձգտում:

Որպէսզի Չկրկնուի Հոկտեմբեր 27-ն

Շարունակուած էջ 1-էն

վութեան հարցը միշտ ալ եղած են Հայաստանի ժողովուրդի մեծամասնութեան մտահոգութեան առարկայ: Վերջին տարիներուն ընդդիմադրութեան հանրահաւաքներու ընթացքին օգտագործուող հռետորաբանութիւնը եւ վարչապետի հասցէին հնչող սպառնալիքներու լոյսին տակ այս հարցը կը դառնայ աւելի հրատապ: Նոյնիսկ կարելի է ըսել, որ Փաշինեանի ապահովութեան համար առնուած միջոցները անբաւարար են, մանաւանդ որ ներկայիս նախկին իշխանութիւններուն սատարողները դարձած են աւելի յուսահատ: Այն ինչ որ չկարողացան ընել ընտրութիւններու միջոցաւ ու ձախողեցան՝ հանրահաւաքներու ընթացքին, կրնան փորձ կատարել

իրականացնելու այլ հնարքներով: Այս ժամանակներուն աշխարհի բոլոր երկիրներու ղեկավարներու կեանքին սպառնացող վտանգը միշտ ալ ներկայ է: Առաւել եւս Հայաստանի պարագային, ուր նախկին վարչակարգը շատ դժուար կը տանի իշխանութեան կորուստը:

ՀՀ ինքնիշխան տարածքի հանդէպ լինեն յարձակումներ, կեանքի կը կոչուեն պատժամիջոցներ, որոնք մշակման փուլում են: Դուք տեղեակ էք՝ ի՞նչ պատժամիջոցների մասին է խօսքը եւ որքանով է դա իրատեսական:

Ես նոյնպէս դրականօրէն գարմացած եմ այդ յայտարարութեան: Գիտեմ, որ Գերմանիայի արտգործնախարար Անալենա Բերբոքը նոյնպէս կողմ էր դրան: Նա փորձում էր այս հարցի շուրջ դաշնակիցներին համատեղել եւրոպական մակարդակով, փաստացի կոչ էր արել պատժամիջոցներ կիրառել: Բայց ես լսել եմ, որ գերմանական կառավարութիւնում միասնականութիւն չկայ այդ հարցով: Այսպիսով, այո, կարող եմ պատկերացնել, որ Բուհեթաքաղում կան մի քանի գործընկերներ, ովքեր կողմ կը լինեն եւ նաեւ կ'աջակցեն: Բայց առայժմ ոչ բոլորը: Եւ սա խնդիր է եւ այդ իսկ պատճառով դժուար է: Որքան էլ դուք ակնկալիքներ բարձրացնէք, Ալիեւը դիտի, որ որոշ մարդիկ երբեք չեն հետեւելու դրան, ուստի նա ապահով է: Հետեւաբար, մենք պէտք է շատ խելացի խաղանք, որպէսզի համոզուենք, որ ապահով առաջարկ ունենք Հայաստանի համար, որ յետագայում յարձակում չի լինի, որ կը լինի ցանկացած տեսակի պատժամիջոց՝ պատրաստ անմիջապէս կեանքի կոչուելու եւ որ մենք կը մնանք վստահելի: Բայց ես չզգտեմ, թէ իրականում ինչ նկատի ունէր արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի նախագահը, արդեօք նա նկատի ունէր եւրոպական, թէ՞ գերմանական միջկառավարական մարմիններին: Զգիտեմ, բայց լաւ է, որ նա բարձրաձայնեց այդ մասին:

Օրեր առաջ Հայաստանն ու Ֆրանսան ռազմական համագործակցութեան պայմանագիր կնքե-

ցին, համաձայն որի Ֆրանսան Հայաստանին պաշտպանական զինամթերք է տրամադրելու: Ի՞նչ կարող է անել Գերմանիան՝ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ Ատրպէյճանի նկրտումների եւ յարձակումների պարագայում:

Գերմանիան սովորաբար շատ արդիւնաւէտ է, երբ խօսքը վերաբերում է մարդասիրական աջակցութեանը: Օրինակ՝ 2008-ին Վրաստանի դէմ Ռուսաստանի ագրեսիայից յետոյ նոր փախստականների համար աւաններ կառուցեց գերմանական GIZ-ը: Այնպէս որ, ես Գերմանիային աւելի շատ այս դերում եմ տեսնում, քան ռազմական աջակցութեան: Բայց ես չեմ կարծում, որ Գերմանիան դէմ կը լինի Հայաստանին ընդդրկելու եւրոպական խաղաղութեան հաստատութիւններում, ինչը նշանակում է, որ մենք կարող ենք նաեւ ուղղակի գէնք մատակարարել Հայաստանին: Մինչեւ այժմ ես տեսնում եմ, որ Գերմանիան շատ բան է անում, ես տեսել եմ բազմաթիւ նախագծեր: Բայց հիմա ֆինանսապէս է պէտք աջակցել: Կան բազմաթիւ փախստականներ, եւ ձմեռը շատ հեռու չէ: Որոշ մարդիկ կացարանի կարիք ունեն՝ նրանց կացարաններում պատերին ու տանիքներին անցքեր կան, ուստի մենք պէտք է այլ միջոցներ գտնենք եւ այս ձմեռը յաղթահարելի դարձնենք:

Ալիեւի յայտարարութիւնների համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնն աւարտուած է եւ այդ թեմայով քննարկելու բան չկայ: Զեզ համար այս հարցը ամբողջութեամբ լուծուած է, թէ՞ ոչ:

Ոչ, ես նկատի ունեմ, որ այն, ինչ նա արել է, ամենամիատացուցիչ միջոցն է ցոյց տալու, որ ինքը

Շաբ.ը էջ 5

ZSU Homenmen Ladies Auxiliary

BINGO Backgammon Game Night

Games - Fun - Food

Friday, November 3, 2023
8 PM

1060 N. Allen Ave. Pasadena, CA. 91104

Tickets : \$35

Serving home made Madzunov Kufita with Rotisserie Chicken!

Գրական Քանդակներ (Ա) Յորս՝ Յակոբ Անասեանի Յիշատակին

ՅԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Բոլոր հայրերն են երազում իրենց որդիներին մէջ տեսնել իրենց: Իսկ նրանք՝ այդ որդիները, ինչպէս Ուիլյեմ Սարոյեանն է ասում «Շատ են նման իրենց հօրը եւ միեւնոյն ժամանակ շատ են տարբեր»:

«Աման, յանկարծ իր հօրը չքաշի», «երանի հօրը նման լինի»: Սովորական դարձած այս արտայայտութիւնների մէջ ես ունեմ իմը՝ «Տա Աստուած, որ ամէն մարդ իր հօր նման լինի»:

- Ի՞նչ է սա, - ինքնահաստատում, փառասիրութիւն,- բնաւ երբեք: Ամէն մարդ, գոնէ իր մտքի մէջ գիտի, թէ ո՞րքանով է նման իր հօրը:

- Ես էլ գիտեմ,- միայն կ'ուզէի իրեն հարցնել:

- Հայրիկ, քո պտուղը քո ծառից հեռու է ընկել. Թէ՞ ոչ:

Իսկ հայրս, վստահ եմ, կ'ասի.

- Դու միշտ իմ ծառի տակ ես տղաս, եւ, ինձ նման՝ ոչ փառասէր:

Նորից չեմ սիրում, սիրում եմ կրկին...
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

...Ասում են՝ սէրը թուաբանութիւն չունի, որովհետեւ միայն Մէկ-ով թուաբանութիւն չի լինի: Ուրեմն՝ պէտք է ունենալ մէկ, միայն մէկ սէր:

- Օհ, որքան եմ ատում ես այդ «Մէկ»-ը: Իսկ իրական կեանքում քիչ կան արդեօք «Մէկ»-ի գե- Մարդիկ, որոնք իրենց ողջ կեանքում միայն մէկ գիրք են կարդացել, թէեւ նրանց անձնական գրադարանը պայթում է հազուադէպ գրքերի առատութիւնից: Հապա նրանք, որոնք մշտապէս գործել են միայն «Մէկ»-ի թելադրանքով, ունեցել միայն Մէկ երազ:

- Չէ, ախպեր, ես չսիրեցի այդ «Մէկ»-ը, մանաւանդ նրանց, որոնք միայն «Մէկ»-ին են սիրել..., եւ...ի՞նչպէս են նրանք մէկ օր ապրում առանց «Մէկ»-ի: Ուրեմն՝ սիրել մէկին՝ չի նշանակում սիրել մէկ անգամ...

- Սիրել մէկին, մէկին, կրկին ու կրկին:

Ծառերը կանգնած են մահացում Ա. ԿԱՍՆԱ

«...Մենք բոլորս, բոլորս ալ մինչեւ հիմա որք ենք», - մահուանից տասը տարի առաջ ասել է Ուիլյեմ Սարոյեանը, իսկ մահուան անկողնում՝ «Ամէն մարդ պիտի մեռնի, բայց ես կը հաւատայի, որ իմ պարագաս բացառութիւն պիտի ըլլար»:

Զարմանալի է, զարմանալի...: Ի՞նչպէս է, որ ոգեղէն ոգի Սարոյեանը չի իմացել, որ

իր պարագան բացառիկ լինելու պարագային անգամ մահուան անկողինը հաւասար է բոլոր մահկանացուների համար: Հաւանաբար նա մոռացել է, որ իր նմանները չեն մահանում, աշխատի «Բարեւ» ասող մարդիկ մնում են, մնում միշտ, միշտ եւ ամէնուրեք: Անդադար հնչում է նրանց «Բարեւ»-ը, բա...րեւ ...

Եթէ մեռնում էլ են՝ միայն ծառերի նման՝ կանգնած, հազա-

րամեայ ծառերի պէս, որոնց թիւը մատների վրայ կարելի է հաշուել: Մարդիկ դրանք պահում են, խնամում, հոգ տանում դրանց, խնամում՝ մարդկութեանը ցոյց տալու դրանց երկարակեցութիւնը, դրանց ուժը, մեծութիւնն ու հարատեւութիւնը:

- Այո, որք էր Սարոյեանը, որք իր հայրենիքի եւ սփիւռքի նման:

Սարոյեանի ծառը աճեց մեծացաւ, կանգուն մնաց օտար հողում ու մնաց աշխարհի հրաշալիքների ցուցակում

Իսկ որքան լաւ կը լինէր, եթէ այդ երկնաքեր կանգուն մնացած ծառը ծնուած, սնուած, մեծացած լինէր իր Մայր հողում:

- Արդեօք այդ ծառի բունը էլ աւելի հաստ է՞ր լինի...:

Սիրելի Ուրախակում է Ուայել ոչ թէ մէկը միւսին, այլ միասին Ուայել միեւնոյն ուղղութեամբ: Ա. ՍԵՆԹ-ԷՔՁԻՊԵՐԻ

Անցեալ դարի 50-ականի կէսերին չորս ընկերներով յաճախ էինք ամառուայ շոգ օրերն անցկացնում Պուշկինի անուան այգում (ներկայիս՝ Բարեկամութեան այգի): Մի օր, առաւօտեան առաջինը յայտնուեցի այգում, ուր, այդ ժամին գրեթէ մարդ չկար: Նկատեցի հեռու, մի ծառի հենուած երիտասարդ գոյգի, որն աշխարհն ու միջավայրը մոռացած խելահեղօրէն համբուրում է: Այդ օրուանից որոշ ժամանակ անց մենք հասկացանք, որ նրանք խելագարի պէս սիրում են միմեանց: Սկզբում ձեռք-ձեռքի բռնած վազում էին այգու նորաբաց ծառուղիներով ու հատուկէն ծառերի միջով: Յետոյ մի փոքր ծառի բնին դաշեցին իրենց անունների սկզբնատառերը: Ժամանակի ընթացքում վերացաւ այգու ցանցառութիւնը: Հիմա արդէն կարելի էր յենուել իրենց ծառին ու... ու մի կո՛ւշտ համբուրուել:

Յետոյ, տարիներ անց, նրանք արդէն թեւ-թեւի մտած էին շրջում ծանօթ այգու, ծանօթ ծառուղիներով, կանգնում էին իրենց ծառի առջեւ ու փորձում կարգալ դաջուած սկզբնատառերը, բայց աւա՛ղ՝ դժուարանում էին: Ծառի կեղեւը ժամանակի ընթացքում հաստացել ու գրեթէ ամբողջովին ծածկել էր իրենց անունները:

...Մի քանի օր առաջ դարձեալ տեսայ արդէն բաւական տարիք առած այդ գոյգին հայկական նպարտանը: Այս անգամ թեւանցուկ արած, որպէսզի չ'ընկնեն:

Վաղճ անցել է երիտասարդութիւնը: Հաւանաբար գաւազների, թոռների տէր են:

Մի քանի երկվայրկեան մտածեցի մօտենալ ծերունազարդ գոյգին ու հարցնել, յիշո՞ւմ են արդեօք հին Երեւանը, իրենց երիտասարդութիւնը, Բարեկամութեան այգին, իրենց ծառը, որի վրայից վաղճ անհետացել են իրենք:

Մի բան էլ կ'ուզէի հարցնել,- այստեղ, Լոս Անջելէսում, որեւէ տեղ թողե՞լ են իրենց անունները...

Եթէ սա են՝ ոչ, հոգ չէ, կը թողնեն որեւէ գերեզմանոցի մետաղեայ սալիկի վրայ:

Շփոթ

«Բնութիւնը երբեք մեզ չի խաբում, այդ մենք ենք, որ միշտ խաբում ենք մեզ»:
ժամժակ Ռուսո

ՌՈՒԲԵՆ ՅՈՎԱԿԻՍԵԱՆ

Հիմնականում բացարձակապէս սիրելի եւ պաշտելի է մեր աւետեաց երկիրը, միայն թէ երբեմն այն դառնում է տարօրինակ, անհասկանալի ու անըմբռնելի: Յաճախ խումբ ընթացքին, երբ այն լինում է «տնական քաշած» թթի օդով եւ մասնակիցների կատարը արդէն լինում է որոշ աստիճանի տաքացած, նրանցից ոմանք գնում են մինչեւ Տիգրան մեծ ու հասնում ԱՄՆ նախագահ Վիլսոնի քարտէզին եւ արդի «միթիզական» Արցախ փրկող քաջերին՝ երբեմն չնկատելով նրա բռնի արտագաղթը: Թերեւս ամէնուրեք այդպէս է, բայց մեր լուծելիք խնդիրները բազում են եւ տարբեր, ուստի կարօտ՝ աւելի լուրջ, առարկայական մօտեցումների: Այն տհաճ կարծիքն է ստեղծուած, թէ մեր հասարակութեան գործող համակարգը, իշխանութեան շրջանակի հետ, մտաւոր շփոթի վիճակ է ապրում թերեւս ներքին քաղաքական անբարոյ խլրտումների ու դաւերի պատճառով, երբ իշխանափոխութեան փորձերը անհաստնում են, կամ դրսում ու ներսում հաստատուած մեր բարեկեցութեամբ մտահոգուողները չեն դադարում մահափորձի արարքներից:

44օրեայ դժոխքից ի վեր տարբեր հարթակներում ու տարբեր ծրարումով խօսուել է, թէ՛ հայկական եւ թէ՛ արդրեջանական կողմի համար կարեւոր Մեղրիի երթեւեկութեան ուղիների մասին է, պարզ չէ, թէ ինչո՞ւ այդ կարեւոր խնդիր լուծուած տեղից չի շարժուել: Մինչեւ իսկ Արցախի անկումից յետոյ

վարչապետը, Են Նիստին (17 հոկտոբ 23) մասնակից լինելով, ամբիոնից դարձեալ անդրադարձաւ այն վերականգնելու շուտափոյտ անհրաժեշտութեանը՝ յայտարարելով, թէ ՀՀ պատրաստ է երաշխաւորել անվտանգ ընթացքը՝ բոլոր տեսակի ադրեջանական երթեւեկութեան համար: Թերեւս պատահական չէր եւ այդ էր Ալիեւի վերջին յայտարարութեան, առիթը, թէ իրենք վերադառնալու են Սիւնիք ոչ թէ հրասայլերով, այլ մարդատար մեքենաներով:

Ալիեւի ներկայացուցիչ էլ չին Ամիրբեկովը օրերս յայտնեց, թէ իր երկիրը ճանաչում է Սիւնիքի նկատմամբ ՀՀ գերիշխանութիւնը եւ հերքեց տարածուած այն լուրը, թէ ցանկանում են այն գրաւել, բայց որքան կարելի է հաւատալ մի պաշտօնեայի, երբ իրականում անընդհատ իրենց յայտարարութիւններին հակառակ են գործել:

Զարմանալի մի այլ երեւոյթ էր քաղաքական դաշտում վրաստանի նախկին նախագահ, մահի դուռը հասած Միխայիլ Սահակաշվիլիի յայտնուելը, որ մոռանալով իր անփառունակ անցեալը, գրաւոր պատգամ է ուղարկում ՀՀ վարչապետին՝ խրատելով զգուշանալ Պուտինի վրիժառութիւնից, օր առաջ հեռացնել ռուս ռազմական շէտարածքից, խզել ՀԱՊ-Կի եւ Ռուսաստանի հետ բոլոր տեսակի յարաբերութիւնները եւ ժամ առաջ փարուել ԵՄ եւ արեւմուտքի համակարգին, մանաւանդ ԱՄՆ, որպէսզի կովկասում խաղաղութիւն եւ անդորր հաստատուի:

Շար.ը էջ 15

STARTING OCTOBER 13 2023
PAINTING CLASS
1st Session Free
Every Friday
5 P M - 6 P M
Teacher Rita Shahinian
1060 ALLEN AVENUE PASADENA, CA 91104
REGISTER NOW
STARTING September 18th
By Calling to
+1(626) 681-9455
\$ 30 FEE / Month
Instagram.com/norserroutlosangeles
facebook.com/norserrout cultural association

Սինկափուրի Հանրապետութիւնը Եւ Երբեմնի Հայ Գաղութը (Նոթեր Ուղեւորի Յուշատետրէն)



Մեր այս տարուան ամառնալին արձակուրդն ուզեցինք անցընել Սինկափուր եւ ճարձն: Ինչո՞ւ Հարաւ արեւելեան Ասիա եւ Սինկափուրի Հանրապետութիւն մասնաւորաբար: Պատճառն այն էր որ նախապէս տասնեակ մը այլ երկիրներ եղած էինք (Միջին Արեւելք, Եւրոպա եւ Ափրիկէ): Հետաքրքրութիւն ունէինք գոնէ մասամբ տեսնել «արեւելեան կողմն աշխարհի»ն ալ...: Ուստի, պատեհ առիթը ներկայացաւ եւ Նորթ Հոլիվուտի հայկական «Ռոյալ Թուր» ճաբորդական ընկերութեան կազմակերպած վերոյիշեալ յոյժ հետաքրքրական շրջապտույտին մասնակցեցանք:

Հոկտեմբերի 6-ին, 2023, 40 հոգիներէ բաղկացած մեր զբօսաշրջիկներու խումբը՝ 18 ժամուան ուղղակի թռիչքով հասաւ ծրագրի առաջին հանգրուանին՝ Սինկափուրի մայրաքաղաքը որ նաեւ կը կոչուի Սինկափուր: Արդարեւ, աշխարհի չորս ինքնիշխան եւ բարգաւաճ երկիրներէն մէկն է Սինկափուրը: Միւս երեքն ալ՝ (Հոնկ Բոնկ, Մօնաքօ եւ Վատիկան) նոյնպէս ազատ եւ ինքնավար պետութիւններ են ու իրենց գործող սահմանադրութեամբ, կը հանդիսանան տիպար օրինակներ: Նման ծրագիր մը՝ մօտաւոր անցեալին, առաջադրուած էր Երուսաղէմին, զայն վերակոչելու միջազգային քաղաք մը, իր մէջ համախմբելով բոլոր հոսանքներն ու դաւանանքները: Սպասենք եւ յուսանք: 1965-ին իր անկախութիւնն ստացած Սինկափուրն այժմ կրնայ մրցակցիլ աշխարհի տարբեր երկիրներու հետ, իր տնտեսութեամբ եւ հարուստ արդիւնաբերութեամբ:

Սինկափուրը խորհրդանշող գլխաւոր կառուցը իր մեծագոյն պանդոկն է Marina Bay Sands Singapor-ը: Արդարեւ երեք բազմաթիւ աշտարակաձեւ այս ինքնատիպ հիւրանոցն ունի 2500 սենեակ: Տանիքին վրայ շինուած է վիթխարի նաւ մը, որ կը միացնէ երեք աշտարակները եւ ունի տասնեակ մը գեղատեսիլ ճաշարաններ, սրահներ ու յարմարութիւններ:

Այլ տեսարժան վայրերու կողքին կ'արժէ տեսնել նաեւ օդակայանին մօտ գտնուող բազմաթիւ քաղաքացիական զբոսայգիները: Այս քաղաքը կը շարունակէ իր իւրօրինակութեամբ, աշխարհի ամենաերկարն է:

Մեր այս այցելութեան տեսարժան վայրերուն մէկ մասն անտեսելով նախընտրեցինք ան-

պայման տեսնել նաեւ հայոց հնադարեան եկեղեցին: Նախօրք եղած կարգադրութեամբ Հոկտեմբերի 9-ին, 2023, մեր զբօսաշրջիկներու խումբը հասաւ քաղաքի կարեւոր եւ բանուկ շրջաններէն 60 Հիլ փողոցին վրայ գտնուող Հայց. Առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Այս պատմական գեղեցիկ եւ փոքր աղօթավայրը կը նկատուի Սինկափուրի առաջին եւ ամենահին քրիստոնեայ եկեղեցին, հիմնուած 1835-ին:

Նախատեսածէն շատ աւելի լաւ վիճակի մէջ տեսանք այս փոքրիկ եւ վայելուչ եկեղեցին, որ ունի եւրոպական ոճ եւ պատշաճ կահաւորում: Մեր խումբին համար յատուկ կարգադրութեամբ բաց էր եկեղեցին եւ դարպասը խորհրդաւոր էր պահը երբ մուտք գործեցինք «եկեղեցին Հայկական»ը՝ որ «ծննդավայրն է հոգևոյս»...: Կը սկսի մոմավարութիւնը եւ կը հնչէ խորհրդաւոր հայոց «Տէր Ողորմեա»ն եւ «Տուր



աշխարհիս խաղաղութիւն»ը, որ այնքան կարեւոր է մանաւանդ այս օրերուն...:

Դուրս կու գանք գողարիկ եկեղեցիէն, որուն ընդարձակ եւ դալարագեղ շրջափակին մէջ գետեղուած էր հայկական մեծ խաչքար մը, ի չիշատակ հայոց Մեծ Եղեռնի 100-ամեակին: Արդարեւ «Յիշողութեան Պարտէզ» կոչուած այս բաժնին մէջ յատուկ տեղ յատկացուած է խումբ մը հայկական շիրմաքարերու, որոնք հոն փոխադրուած են հին գերեզմանատունէ մը: Յիշատակութեան արժանի շատ մը տապանաքարեր կան: Անոնցմէ մին կը կրէ Ազնէս Զուակիմի (Աշխէն Յովակիմեան) անունը: Ենթական ծանօթ հայագրի ծաղկաբոյժ մը եղած է եւ իր


Փաստենայի Հայկական Ճեմարանը Տօնեց Հայկական Մշակոյթի Օրը



25 Հոկտեմբեր, 2023, Չորեքշաբթի, Փաստենայի Հայկական Ճեմարանի (Blair School Armenian Academy) հանդիսարանը ապրեցաւ ցնծուն տօնակատարութիւն մը: Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս ճեմարանի աշակերտները հաւաքուեցան շքեղ սրահի մէջ եւ վայելեցին հայկական արուեստով լեցուն օր մը:

Յայտագիրը սկսաւ ճեմարանի վարիչ Նորայր Տատուբեանի խօսքով, թէ մշակոյթի կենսունակութիւնը հայու ինքնութեան արտացոլացումն է: Ան աշակերտներ

ներկայացուց հայկական երաժշտական տոհմիկ նուագարանները, ինչպէս՝ ծիրանափողը, շուին, պարկապուկը, գուռնան, տհուլը, պկուն: Պրն. Գէորգեանը թէ՛ նուագեց զանոնք եւ թէ՛ բացատրութիւններ տուաւ, թէ իւրաքանչիւր նուագարանը ինչպէ՞ս կը շինուի եւ զանոնք շինելու համար ինչ նիւթեր կը գործածուին (փայտի տեսակը, եւ այլն): Հիւր երաժիշտը նաեւ հիմնական գիտելիքներ տուաւ հայկական ազգային երաժշտութեան սկզբունքներու եւ ակունքներու մասին: Ան բոլորին զարմացուց բացայայտե-




րուն խրատեց՝ թէ պէ՛տք է ծանօթանալ հայ մտքի ստեղծագործութիւններուն հետ, պէ՛տք է ապրիլ անոնց հետ շրջապտուած: Ան ըսաւ. «Հարկ է արտադրել, ո՛չ միայն սպառել. երգել, ո՛չ միայն ունկնդրել. պարել, ո՛չ միայն դիտել»: Այս բարոյախօսութիւնը գործնականի վերածելու համար դպրոց հրաւիրուած էին երկու արուեստագէտեր: Անոնք լայն բացուած սեղաններու վրայ ցուցադրեցին իրենց արուեստի գործիքները եւ լաւագոյն նմուշները:

Երկրորդ հիւրը հայկական տարագրի մասնագէտ, գեղանկարիչ, ձեւաւորող Այլին Պօղոս-

Առաջին հիւրը երգի եւ երաժշտութեան ուսուցիչ, երաժշտական մարդաբան (anthropologist) Արիկ Գէորգեանն էր: Ան

Երկրորդ հիւրը հայկական տարագրի մասնագէտ, գեղանկարիչ, ձեւաւորող Այլին Պօղոս-



MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry

Տոթթ. Միեր Պապեան
Ատամնարոյժ

1111 S. Glendale Ave., Suite 206
Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884
Fax: (818) 547-9360

Հայաստանի Պետական Սիմֆոնիկ Նուագախումբն ու Թաւջութակահար Կամիլ Թոման Հանդես են Եկել Համատեղ Համերգով



Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբն ու մեծահամբաւ թաւջութակահար Կամիլ Թոման երաժշտասերներին են ներկայացել համատեղ համերգով, որը դեկավարել է նուագախմբի գեղարուեստական դեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատեանը:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ երեկոյին հնչել են անգլիացի մեծ կոմպոզիտոր էդուարդ էլզարի Թաւջութակի կոնցերտը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախմբի 18-րդ համերգաշրջանի ռեզիդենտ արտիստ Կամիլ Թոման նկատում է, որ էլզարի այս ստեղծագործութիւնը թաւջութակի համար գրուած հիմնական գործերից է, որը խիստ հարազատ է իրեն: Նա փոքր տարիքից բազմիցս ունկնդրել է էլզարի կոնցերտը՝ հիանալով նրա գեղեցկութեամբ ու պարզեւեւ յոյզերով,

եւ վարպետութեան դաս է անցկացրել «Երաժշտութիւն յանուն ապագայի» մշակութային հիմնադրամի կրթաթոշակառուների համար: Թաւջութակահարուհու համար շատ հաճելի է հանդիպել հայ պատանի երաժիշտներին, լսել նրանց, հաղորդել իր գիտելիքները, ոգեշնչել, փոխանցել սէր ու էներգիա:

Խօսելով Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախմբի հետ համագործակցութեան մասին՝ նա ասում է՝ թէեւ ինքը հայերէն չի հասկանում, սակայն երաժիշտների հետ կարողանում է հեշտութեամբ հաղորդակցուել երաժշտութեան լեզուով:

Համերգին հնչել են նաեւ էդուարդ էլզարի «Երազանքի երեխաներ» ստեղծագործութիւնը եւ «Էնիգմա» վարիացիաները:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նուագախումբը միացել է

Սինկափուրի Հանրապետութիւնը

Շարունակուած էջ 13-էն

ներկայացուցած «խորձ» ծաղիկը մեծ վարկաւորում ստանալով, ներկայիս կը նկատուի Սինկափուրի խորհրդանիշ պետական ծաղիկը: Նշենք նաեւ որ հայեր մեծ ներդրում ունեցած են այս քաղաքին զարգացման մէջ:

1973-ին, հայոց եկեղեցին ներառուած է Սինկափուրի Ազգային Յուշարձաններու շարքին եւ ենթակայ է Ազգային Ժառանգու-

թեան Խնամակալութեան: Այս մարմինն կ'աջակցին խումբ մը տեղացի հայեր, որոնք մասամբ ստանձնած են հոգաբարձական պարտականութիւններ, զորս կը կատարեն մեծ գիտակցութեամբ ու նուիրումով:

Երկօրեայ կարճ այցելութենէն ետք խումբը լաւագոյն տպաւորութիւններով եւ յիշատակներով յագեցուած, իր ուղեւորութիւնը շարունակեց դէպի ձաբոն: Գ. ՄՈՂՈՅԵԱՆ

Փաստեմայի Հայկական Ճեմարանը

Շարունակուած էջ 13-էն

փուռն էր: Ան ցուցադրեց հայկական տարազներու լուսանկարներ, հայկական ասեղնագործութեան ընտիր նմուշներ եւ այդ արհեստին պատկանող գործիքներ: Սահիկներու իր ներկայացումի մէջ Տիկին Պողոսիուհը խօսեցաւ հայկական տարազի, կերպասի, գորգագործութեան, ժանեակներու եւ երկրաչափական ասեղնագործութիւններու մասին: Ան բացատրեց, թէ ի՞նչ նշանակութիւն ունին ծառը, նուռը, կեռխաչը եւ թէ՛ միջնադարուն հայերը ինչպէ՛ս ձեռք կը բերէին բնական ներկեր: Արուեստագէտ հիւրը աշակերտներուն ցոյց տուաւ հիւսելու քանի մը ցուցմունք, ապա հետաքրքիր պատանիները քանի մը տող հիւսելու առաջին փորձ մը կատարեցին:

Ապա եկաւ համադպրոցական պարի ժամը: Ամբողջ դպրոցը, սրահի կեդրոնը մէջ մէջի երկուօղակ կազմեց եւ պատրաստուեցաւ հնադարեան Փափուրի պարը

պարելու: Ն. Տատուբեանը օղակի մէջ բոլորին բացատրեց, թէ Փափուրին չարխափան պար է: Այդ պարը ունի տասը ոտնահարուած: Ըստ հին հաւատալիքի, չարը կ'ապրի իր ստորերկրեայ մութ աշխարհի մէջ. սակայն, երբեմն դուրս կը հանէ իր տգեղ գլուխը եւ կը փորձէ աւրել մարդու կեանքը: Բայց հայը ուսուսի բռնած կը պարէ Փափուրին, որպէսզի չարը վերադառնայ երկրի խորերը եւ մենք մեր հողի վրայ ապրինք խաղաղ եւ ուրախ: Ապա, Արիկ Գէորգեանի աքորտէոնի հնչեղ ձայնը լսելով եւ պարուսոյցներ Փափուրի եւ Սինթիա Ալպարեան քոյրերու ցուցմունքները հետեւելով՝ աշակերտները եւ անոնց ուսուցիչները ուսուսի պարեցին Փափուրին:

Յայտագիրը վերջացաւ աւարտական դասարանի ընտանեկան խմբանկարով, ուր աշակերտները 19րդ դարու արուեստասէր հայ ընտանիքի մը տաղանդաւոր երաժիշտ որդիները եւ դուստրները դարձան:



Իսկ այժմ ինքն է այն կատարում:

Երաժշտութեան միջոցով կարիքաւոր երեխաներին օգնելու նպատակով Կամիլ Թոման 2020 թուականին ձայնագրել է «Ձայներ՝ յանուն յոյսի» ալպոմը՝ յաջակցութիւն ՅՈՒՆԻՍԵՖ-ի: Ֆրանսացի երաժիշտն ընդգծում է՝ իր համար շատ յուզիչ է լինել Հայաստանում, քանի որ երկու երկրները վաղեմի բարեկամական յարաբերութիւններ ունեն: Թաւջութակահարի խօսքով՝ երաժշտութիւնը, որ հզոր ուժ ունի... կարող է բուժել հոգիները, մարդկանց յոյս պարգեւել, մղել միմեանց օգնելու:

Ըստ նրա՝ հայ-ֆրանսական բարեկամութեան վառ խորհրդանիշներէ մէկը Շառլ Ազնաւուրն է, որի «Աւէ Մարիան» նոյնպէս հնչել է համերգին որպէս աղօթք: Կամիլ Թոման Երեւանում նա-

ՅՈՒՆԻՍԵՖ-ին՝ արցախցի երեխաների առաջնային կարիքների ապահովման նպատակով: Սիմֆոնիկ նուագախմբի առաջիկա ամիսների համերգներին հնարաւորութիւն կ'ընձեռուի ունկնդիրներին, բարեգործներին, նուագախմբի գործընկերներին իրենց նուիրատուութիւնների միջոցով հոգալու արցախցի երեխաների ամենաառաջնային կարիքները եւ նպաստելու նրանց մատուցող սոցիալ-հոգեբանական, առողջապահական, երեխաների պաշտպանութեան, վաղ մանկական կրթական եւ այլ ծառայութիւնների հասանելիութեանը: Նուագախմբի համերգների տոմսերի արժէքը նուագագոյնի են հասցուել, ինչի շնորհիւ հնարաւորութիւն կը տրուի աւելի ու աւելի շատ հանդիսատեսի գալ համերգների ու տեղում կատարել նուիրաբերութիւն:

Armenia Summer Trip

July 2-16 2024

Guide & Director: Norayr Daduryan

- What's Included
 - 11 nights In Yerevan and 2 nights In Lori
 - 5 lunches and 2 dinners (including farewell dinner)
 - Bus transfers to and from the airport & hotel
 - Wine tour and lunch In Van Ardi Winery
 - Guided tours In Sevan, Gyumri, Lori, and Yerevan
 - Monasteries, historic, and major UNESCO sites
 - Day trip in Vienna, Austria
 - Entrance fees to museums and monuments
- Pricing
 - Flight + Land Double Occup. \$4,699 pp
 - Land Only Double Occup. \$2,799 pp

Book Your Vacation Now!

Norayr Daduryan
norayrdaduryan@gmail.com
(626) 660-9443

Եւրախորհրդարանի Գերմանացի Պատգամաւորն

Շարունակուած էջ 11-էն

ուազմական հզօրութիւն ունի: Համոզուելու համար, որ մարդիկ ընդհանրապէս չեն վստահուած նրան, բաւական է այն, որ բոլորը հեռացել են կամ ստիպուած են եղել հեռանալ: Բայց նրանցից ոմանք, միգրացի, ուզում են վերադառնալ: Միգրացի, նրանք ցանկանում են պարզապէս ինչ-որ իրեր հանել իրենց բնակարաններից կամ տներից եւ այլն: Եւ նրանց համար պէտք է վերադառնալու շատ ոչ բիւրոկրատական ճանապարհ լինի: Ի վերջոյ, դա նոյնպէս պէտք է հնարաւոր լինի առանց Ատրպէյճանի քաղաքացի դառնալու եւ նման բաները պէտք է բացառուեն, պէտք է հնարաւորինս շուտ կանոնակարգուեն: Ես կանգնած էի այն ամենաբարձր գագաթին, որտեղից կարող էի տեսնել իրավիճակը, կարող էի տեսնել, թէ ինչպէս են ատրպէյճանական զօրքերը եւ ոչ միայն զօրքերը, այլ նաեւ շինարարական ընկերութիւնները, կառուցում պարիսպներ, ճանապարհներ, խողովակաշարեր, անցակէտեր: Ասես մը շիններ լինեն, որոնք ակնյայտօրէն ներխուժել եւ նոյն պահին սկսել են կեղծել իրականութիւնը, ամբողջով սահմաններն աներեւակայելի արագութեամբ: Եւ այստեղ, կարծում եմ, միջազգային հանրութիւնը պէտք է համոզուի, որ մարդիկ, բնիկ ժողովուրդը, որն ապրել է Արցախում, ցանկացած պահի պէտք է հնարաւորութիւն ունենայ վերադառնալ:

-Բրիւսելում Զոկտեմբերի վերջին նախատեսուած եռակողմ հանդիպումը չի կայացրել, Զայաստանում արդէն յայտարարել են, որ հանդիպման յետաձգումը նախաձեռնել է Ատրպէյճանը: Ինչպէ՞ս կը մեկնաբանեք Ատրպէյճանի այս պահուածքը՝ հաշուի առնելով այն հանգամանքը, որ Ալիեւը վերջին պահին հրաժարուեց նաեւ Գրանադայի հնգակողմ հանդիպումը մասնակցելուց, որին մասնակցում էր նաեւ Կանցլեր Օլաֆ Շոլցը:

-Այո, չգիտեմ, արդէն երրորդ անգամն է: Ենթադրում եմ յետաձգուել է, քանի որ խաղում են դրա վրայ, թէ արդեօք կարող են աւելին ստանալ, ինչպէս նախկինում ասացի, այլ ձեւաչափով: Նրանք երազում են 3 + 3-ի մասին:

-Կարծում եք, որ 3+3 ձեւաչափն աւելի շատ է՞ թխում Ալիեւի շահերից:

-Միանշանակ, ես կարծում եմ, որ Ալիեւի համար այդ ֆորմատն աւելի լաւ է: Կարծում եմ, որ նրա համար աւելի լաւ կը լինի եւ նա անձամբ յոյսեր ունի, որ կարող է դրանից աւելին ստանալ, քան ԵՄ միջնորդական խաղաղութեան գործարքից: Այսպիսով, դա մի փոքր երկրնորանք է, որի մէջ մենք գտնուում ենք: Մի կողմից մենք պէտք է փայտ ունենանք նրան զսպելու համար, միւս կողմից, մեզ պէտք է գազար, որ նա ընդունի ԵՄ միջնորդութեան գործարքը: Ինչպիսի՞ տեսք կ'ունենայ այն, պէտք է տեսնենք:

-ԵՄ օրակարգը շատ աւելի կեդրոնացած է հնարաւոր խաղաղութեան պայմանագրի վրայ: Ինչպէ՞ս էք տեսնում այս խաղաղութիւնը: Որքանով է դա իրատեսակուած ձեզ համար: Կարող եմք իսկապէս խաղաղութեան պայմանագիր ունենալ Ատրպէյճանի հետ:

-Կարծում եմ՝ դա միշտ առաջ

է քաշուել Փաշինեանի կողմից: Ես հասկանում եմ, որ այս կառավարութիւնը տարբերում է մնացած բոլոր կառավարութիւններից եւ առաջին անգամ է իսկապէս խօսում այդ մասին: Դա մեր օրակարգը չէ, դա Հայաստանի կառավարութեան օրակարգն է: Նրանք տեսնում են, որ ծով ելք չունեցող երկիր են: Նրանք իսկապէս կը ցանկանային բաց սահմաններ ունենալ Թուրք-Իրանի հետ, մուտք ունենալ դէպի շրջակայ բոլոր երկրներ, առեւտուր անել նոյն մակարդակի վրայ եւ այժմ նրանց անհրաժեշտ է խաղաղութեան պայմանագիր, որը կ'ընդունի Ատրպէյճանը, որպէսզի Ատրպէյճանն էլ իր հերթին կարողանայ ազդանշան տալ իր գործընկեր Թուրքիային: Բայց ինձ համար սա սալեամբի մարտավարութիւնն է: Ուստի հիմա, քանի որ կարգաւորող հարցն իրենց համար չարգաւորուել է, նրանք այլ թեմա են գտնում: Գտնում են անկախութիւնը, «Ձանգեզուրի միջանցքը», ինչ-որ բան են գտնում Հայաստանին տնտեսապէս այս խիստ խոցելի վիճակում պահելու համար: Եւ դա ինձ համար, իրօք, բացարձակապէս անընդունելի է: Սրա մասին պէտք է բարձրաձայնել նաեւ հանրային հարթակներում, բայց խաղաղութեան պայմանագիրը իմ օրակարգում չէ, այլ նախ հայ ժողովրդի համար է, եւ հայ ժողովուրդը վերջապէս արժանի է խաղաղութեան եւ ցանկանում է զարգացնել իր երկիրը: Երբ մի կողմում իրանն է, իսկ միւսում՝ Վրաստանը, որը նոյնպէս փոքր ինչ անապահով է, կարծում եմ՝ իրականում ռազմավարական առումով շատ խելացի է սակ՝ «մենք պատրաստ ենք խաղաղութեան գործարքի»:

-Վերջերս Զայաստանում էիք, ի՞նչ տպաւորութիւններով եք վերադարձել:

-Ես հիացած եմ եւ մեծ յարգանքով եմ վերաբերում Հայաստանում բոլորին, ովքեր չորս օրուայ ընթացքում մէկ մուտքի միջոցով կարողացել են ինտեգրել 100000 մարդու: Նկատի ունեմ, որ ոչ ոք երբեք չէր կարող պատկերացնել, որ դա Գերմանիայում կը լինի: Գերմանիայում բնակչութեանը թիւն 84 միլիոն է, իսկ Հայաստանում խօսք է գնում առաւելագոյնը 3 միլիոնի մասին: Մարդիկ կարողացան դա անել առանց օտար օգնութեան՝ միայն իրենց, կամաւորների, շատ ներգրաւուած մարդկանց շնորհիւ: Խօսք է մտնել տրամաւ ստացած, ուժասպառ, վերջին 8-9 ամիսների ընթացքում սնունդ չունեցած, բուժօգնութիւն չստացած մարդկանց ընդունելու եւ կացարանով ապահովելու մասին: Ընդհանուր մթնոլորտն ու մեսիջը հետեւեալն էր՝ «մենք հպարտ ենք, կարող ենք հպարտանալ մեր արածով: Լաւ է, որ դուք գալիս էք եւ տեսնում էք սա, բայց մենք մեր ուժերով կարողացանք»: Եւ ես կարծում եմ, որ սա իսկապէս անհաւանական է: Սա իսկապէս մի բան է, որը աշխարհը պէտք է իմանայ եւ այժմ չաջորդ քայլերը կը լինեն, ինչպէս ասացի, նախ մարդկանց կացարան տրամադրելը՝ ձեռնարկն ընդառաջ: Պէտք է վստահ լինենք, որ մարդիկ երկրորդ հնարաւորութիւն կ'ունենան՝ կարիերայի, կրթութեան հնարաւորութիւն, համոզուենք, որ կարող են ինտեգրուել աշխատաշուկային

Շփոթ

Շարունակուած էջ 12-էն

Վրիպումների այս փորձառուն դեռ չի հասկացել, որ արեւածագը արեւելքում է, իսկ մայրամուտը արեւմուտքում, մինչ դեռ համարձակուում է, շփոթ առաջացնելով, խրատ տալ՝ որպէս փորձառու հաստատելով, որ տխմարութիւնը սահման չունի:

Բախումների եւ շփոթի մի այլ նոր մեծ հոսանք է ստեղծուել արցախցի տեղահանուածների եւ չբանտարկուած նորընտիր ղեկավարների միջեւ, որ տեղաւորուած են Երեւան: Նրանք եւս արժանացան «Թուրք» ու «ղաւաճան» անունումին: Շատ պղտոր է միջավայրը: Նախկինների «Նիկոլդաւաճան» պիտակը փոխանցուել ու փակցուել է միւսների ճակատին մինչեւ իսկ մեղադրանքներով, թէ Արցախի նորընտիր փրկիչները կարողացել են հսկայական գումարներ իւրացնել, որի հետեւանքը նմանում է քոչի ու սերժիկի դէպքին, իմա՝ կը մնան անհետեւանք: Փաստ է, որ ՀՀ արդի վիճակը եւ Արցախի անկումը, իր որպէս անկախ պետութեան լինելու չամառ ցնորքներով, հիմնաւորուել է ՀՀ 1998 պետական յեղաշրջումից ի վեր, երբ քոչը դարձաւ միահեծան նախագահ իր ողբալի հետեւանքներով, իսկ թալանը դարձել էր ապրելակերպ:

Համընդհանուր խառնիճադանջի մէջ դժուար է լուելեայն անցնել Պաղեստինում (Գազա) տեղի ունեցող դժոխք երեւոյթի նկատմամբ, որ հեռու չէ Արցախում եղածից, բոլոր նրբութիւնները նկատի ունենալով: Տարբերութիւն չկայ Շու-

չիում հաստատուած Թուրք «գորշ գայլերի» ու «սիոնիստ» մարտիկների ծրագրային ոտնձգութիւնների միջեւ, կամ այն մեծ չէ, որ քաջալերուած է շատ երկրների կողմից, մանաւանդ ԱՄՆի:

Շատերը դեռ չեն հասկացել եւ կը հասկանա՞ն արդեօք, որ ԱՄՆ, բացի Իսրայէլից, որեւէ երկրում կառուցողական չեն եղել, քանի որ այդ երկրի վարչական համակարգը հրեաներն են ղեկավարում եւ ոչ միայն այնտեղ, այլ նաեւ եւրոպական բազում երկրներում եւ բոլոր տեսակի յարաբերութիւնները ուղղուած են Իսրայէլի շահերին: Կոչը պիտի լինել եւ չնկատել ԱՄՆ նախագահի շուտափոյտ ժամանումը Երուսաղէմ եւ օժանդակութիւնը, որ նա խոստացաւ, որի իրաւունքը մենք չունեցանք, բացի կրակը դադարեցնելու՝ ցաւակցող փուչ կոչերից եւ դարեր անց դարձեալ գտնուեցինք թղթէ շերտփի եւ պապենական Արցախը լքած գաղթականների վիճակում: Կա՞ր արդեօք այլ ելք, թերեւս, բայց անհրաժեշտ էր մտածել ժամանակին, նախատեսել եւ պատրաստուել, իսկ միաւորուել բառը գործածել չեմ համարձակուում: Յիշում եմ երգը, երբ հայը պատրաստ էր միակ այծը ծախել ու թուֆանք առնել Կիկոյին: Փոխարէնը, մերոնցից ոմանք, գէնք ծախեցին, որ փառաւոր ապարանքներ կառուցեն: ՅՈՒՆԻԹԱՍ:

Մեր ղեկավար այրերի պարտաւորութիւնն է՝ առանց բացառութեան, զգոյշ, շատ զգոյշ քայլեր անել եւ խօսել:

Ուշիմ լինելը արգելուած չէ եւ ոչ աւելորդ:

Եւ այլն: Պէտք է համոզուած լինենք, որ Եւրամիութիւնն աջակցելու, օգնելու է: Ոմանք հոգեբանական աջակցութեան կարիք կ'ունենան եւ այս ամէնը պէտք է կազմակերպուի յաջորդ ամիսների ընթացքում: Ես յուսով եմ, որ օգնութիւն կը տեսնեմ ԱՄՆ-ից, Գերմանիայից, այլ երկրներից, բայց նաեւ ԵՄ-ն պէտք է լինի առաջին գործընկերը, որպէսզի հայ ժողովուրդը տեսնի, որ Արեւմուտքից ներկայութիւն կայ:

Երկրորդն այն է, որ Հայաստանը բազմաթիւ բարեփոխումներ է արել, շատ է շարժուել դէպի ժողովրդավարութիւն, իհարկէ, ոչ լիարժէք գործունակ, բայց շատ աւելի առաջադէմ, քան որոշ այլ երկրներ: Յատկապէս, իհարկէ, շատ աւելին, քան Ատրպէյճանը, բայց ես կ'ասէի, որ նոյնիսկ Վրաստանի հետ համեմատած, Հայաստանը շատ բան է արել եւ դա պէտք է արժանանայ ԵՄ-ի գնահատականին: Կարծում եմ, որ մենք պէտք է շատ աւելին անենք ժողովրդին ցոյց տալու համար, որ մենք տեսել ենք բարելաւումները՝ լինի դա

վիզայի ազատականացման հարցում, թէ ասոցացման համաձայնագրի հարցում, որը մերժուեց 2013 թուականին, առետրային յարաբերութիւնների խորացման վերաբերեալ ու էլի շատ այլ հարցերում: Ես կարծում եմ, որ ԵՄ-ն այժմ պէտք է հանդէս գա առաջարկութիւններով՝ ցոյց տալու Հայաստանի ժողովրդին իր պատրաստակամութիւնը: Ես այնքան հետաքրքիր գրոյցներ ունեցայ, եւ ոչ ոք չգանգատուեց: Գոնէ Գերմանիայում անցած ձմրանը տեսայ, որ բոլորը բողոքում էին էներգալիքների թանկացումից, չափազանց շատ փախստականների ներկայութիւնից: Իսկ Հայաստանը, որտեղ հաստատ շատ աւելի դժուար է, քան հարուստ Գերմանիայում, ոչ ոք երբեք անգամ մէկ բողոք չընեց: Սա ճիշդութեան օրինակելի դրսեւորում է: Մոլորական նման է, բայց առկայ հարեւանութեան պայմաններում Հայաստանի նման կեցուածքն ու այդքան համարձակ լինելն աւելի դժուար է: Կարճ ասած՝ հպարտ եմ ու ոգեշնչուած: ԼԻԼԻԹ ԳԱՄՊԱՐԵԱՆ

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Լիոնել Մեսին Դարձեալ Արժանացաւ «Ոսկէ Գնդակին»

Աշխարհի ախոյեան Արժանի Տիտի հաւաքականի եւ ամերիկեան «Ինթեր Մայամի» 36-ամեայ յարձակող Լիոնել Մեսին 8-րդ անգամ ըլլալով արժանացաւ աշխարհի լաւագոյն ֆուտպոլիստի՝ «Ոսկէ Գնդակ» մրցանակին:

Մրցանակը Մեսին յանձնեց Անգլիոյի հաւաքականի նախկին ֆուտպոլիստ, «Ինթեր Մայամի» համասեփականատէր Տեւիտ Պեքհեմը:



Երլինկ Յոլանտ Արժանացաւ Լաւագոյն Ոմբարկուի Մրցանակին

Փարիզի մէջ տեղի ունեցած «Ոսկէ գնդակ» մրցանակաբաշխութեան ընթացքին Անգլիոյ ախոյեան, գաւաթակիր, Ախոյեաններու Լիգայի գաւաթակիր, Եւրոպայի սուպերգաւաթակիր Մանչեսթըր Սիթիի 23-ամեայ նորվեկիացի յարձակող էրլինկ Հոլանտ արժանացաւ 2022-2023 թուականներու մրցաշրջանին աշխարհի լաւագոյն ոմբարկուի մրցանակին, որ կը կրէ գերմանացի Կերտ Միւլերի անունը:

Անցած մրցաշրջանին էրլինկ Հոլանտ նշանակած է 56 կոլ:

«Ինթեր» Ուժեղ Եր «Ռոմայէն» Եւ Առաջին Դիրքի վրայ է

Իտալիոյ առաջնութեան 10-րդ հանգրուանի խաղին Միլանի «Ինթերը» հիւրընկալեց «Ռոմային» եւ առաւելութեան հասաւ նուազագոյն արդիւնքով:



81-րդ վայրկեանին խաղի միակ կողմը նշանակեց ֆրանսացի յարձակող Մարքուս Դիւրամը:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագ, կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը «Ինթերի» մեկնարկային կազմէն էր եւ փոխարինուեցաւ 75-րդ վայրկեանին:

«Ինթերը» 25 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Թուրինի «Եովկենթուսէն»:

«Թորենտ» Յաղթեց Եւ Ամրապնդուեցաւ Առաջին Տեղը

Ֆուտպոլի Անգլիոյ Փրեմիեր Լիգայի 10-րդ հանգրուանի մեկնարկային խաղին առաջատար «Թորենտը» լոնտոնեան տերպիլի մէջ հիւրըն «Թորենտ» 26 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է ախոյեան «Մանչեսթըր Սիթիէն», որ մէկ խաղ նուազ խաղցած է:

«Մանչեսթըր Սիթին» Պարտութեան Մատնեց «Մանչեսթըր Եունայթըտին»

Անգլիոյ առաջնութեան 10-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթըր Սիթին» «Օլտ Թրաֆորտ» մարզադաշտին վրայ հիւրընկալուեալ «Մանչեսթըր Եունայթըտին» եւ յաղթեց 3:0 արդիւնքով:



«Սիթիի» երկու կողերը նշանակեց նորվեկիացի յարձակող էրլինկ Հոլանտը: Աչքի ինկաւ նաեւ անգլիացի կիսապաշտպան Ֆիլ Ֆոտսըրը:

«Մանչեսթըր Սիթին» 24 կէտով երրորդն է: «Մանչեսթըր Եունայթըտը» 8-րդն է՝ 15 կէտ:

«Լիվերպուլի» Եւ «Աստոն Վիլայի» Յաղթանակները

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 10-րդ հանգրուանին «Լիվերպուլը» ընդունեց «Նոթինգհեմ Ֆորեսթին» եւ յաղթեց 3:0 արդիւնքով:

Գերմանացի Եուրգեն Կրոպի գլխաւորած խումբը 23 կէտով երրորդն է եւ 1 կէտ է առաջ չորրորդ տեղը գտնուող «Ասթոն Վիլայէն», որ 3:1 արդիւնքով պարտութեան մատնեց «Լուիս Թաունին»:

«Չելսին» Պարտուեցաւ «Պրենթֆորտէն»

Ֆուտպոլի Անգլիոյ առաջնութեան 10-րդ հանգրուանին Լոնտոնի «Չելսին» ընդունեց «Պրենթֆորտին» եւ պարտութիւն կրեց 0:2 արդիւնքով:

«Պրենթֆորտ» 13 կէտով 10-րդն է, «Չելսին» 11-րդ տեղն է՝ 12 կէտ:

Թայսոն Ֆիլին Յաղթեց Ֆրենսիս Նգանուին



Փրոֆեսիոնալ բռնցքամարտի սուպերձանր քաշային կարգի WBC վարկածով աշխարհի ախոյեան, բրիտանացի Թայսոն Ֆիլին յաղթեց խառը մենամարտերու (MMA) ներկայացուցիչ, քամբուռնցի Ֆրենսիս Նկանուին Սէուտական Արաբիոյ մայրաքաղաք Ռիյատի մէջ տեղի ունեցած բռնցքամարտի կանոններով մենամարտին:

Երրորդ ռաունտին Նկանուն նոքաութի ենթարկեց մրցակիցին, սակայն Ֆիլին կարողացաւ շարունակել մենամարտը, որ տեւեց 10 ռաունտ:

Մրցավարներու ոչ միաձայն որոշմամբ Ֆիլին յաղթող որոշուեցաւ: Ֆիլին 35 մենամարտ կատարած է փրոֆեսիոնալ ռինկին մէջ՝ տանելով 34 յաղթանակ: Մէկ մենամարտ աւարտած է ոչ ոքի:

Տիգրան Բարսեղեանի Կոլը Սլովաքիայի Առաջնութեան Խաղին

Սլովաքիայի առաջնութեան 12-րդ հանգրուանի խաղին «Սլովանը» 4:0 արդիւնքով յաղթեց «Կոչիցէին»:



«Սլովանի» երկրորդ կոլը 9-րդ վայրկեանին նշանակեց Հայաստանի հաւաքականի յարձակող Տիգրան Բարսեղեանը, որ դարձաւ նաեւ կոլային փոխանցման հեղինակ: Բարսեղեանը փոխարինուեցաւ 66-րդ վայրկեանին:

«Սլովանը» 26 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

«Պարսելոնան» Առաջին Պարտութիւնը Կրեց Այս Մրցաշրջանին

Սպանիոյ ախոյեան «Պարսելոնան» այս մրցաշրջանին կրեց առաջին պարտութիւնը 10 յաղթանակէն եւ 3 հաւասարութենէ յետոյ: Լա Լիգայի 11-րդ հանգրուանին սպանացի Չալիի գլխաւորած խումբը 1:2 արդիւնքով պարտուեցաւ փոխախոյեան Մատրիտի «Ռեալին», որը կազմէն տուպլի հեղինակ դարձաւ 20-ամեայ անգլիացի կիսապաշտպան ձուտ Պելլինկհեմը:



«Սլովանը» 26 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

ՊՍԺ-ի Յաղթանակը, Սփապի Տուպլը

Ֆրանսայի առաջնութեան 10-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն հիւրընկալեց «Պրեստին» եւ յաղթեց 3:2 արդիւնքով:

Տուպլի հեղինակ դարձաւ ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն: ՊՍԺ-ն 21 կէտով երկրորդն է եւ 1 կէտ ետ է առաջատար «Նիսէն»:

ՖիՖԱ-ն 3 Տարիով Հեռացուց Ռուքիալեսին Ֆուտպոլային Գործունէութենէն

Ֆուտպոլի միջազգային ֆետերացիան (ՖիՖԱ) 3 տարիով հեռացուց Սպանիոյ ֆուտպոլի ֆետերացիայի նախկին նախագահ Լուիս Ռուքիալեսին ֆուտպոլային գործունէութենէն ազգային եւ միջազգային մակարդակի վրայ, կը հաղորդէ կազմակերպութեան կայքը:

Ռուքիալեսի պատճառը ֆուտպոլի կանանց աշխարհի առաջնութեան ախոյեանի տիտղոսը նուաճած Սպանիոյ հաւաքականի պարզեւտրման արարողութեան ժամանակ ձենի էրմոսոյի շուրթերը համբուրելն է:

Դրուագը յայտնուած էր ուղիղ եթերով եւ բողոքի ալիք բարձրացած Սպանիոյ մէջ:

ՖիՖԱ-ի յայտարարութեան մէջ կը նշուի, որ Լուիս Ռուքիալեսը խախտած է կազմակերպութեան կարգապահական կանոնները: